

ԱԿՆԱՐԿ

ՔԱՐՈԶԱՐՇԱԻԱՅԻՆ
ԱՐՏԱՌՈՅ
ՀՈՒՏՈՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Մարդու իրաւունքներու պաշտպանի հաստատութիւնը միջազգային օրէնսդրութեան հիմունքներ ունի: Դիմումներ ստանալու, դիտարկումներ կատարելու, քննարկելու, փաստագրելու եւ գնահատական բանաձեւելու ընթացակարգեր կան, որոնք ո՛չ միայն ներքին կարգով կը հասցեագրուին եւ կը յայտարարուին, այլ նաեւ կը յղուին միջազգային համապատասխան ատենաներ:

Այս հաստատութիւնը սերտօրէն առնչուած է նաեւ Պրիւքէլի հետ Երեւանի ստորագրած համաձայնագիրներուն եւ կը կրէ եւրոպական չափանիշներով ամրագրուած մարդու իրաւունքներու հայեցակարգային մօտեցումները:

Պաշտօնը ապաքաղաքական եւ այդ պատճառով պաշտօնը զբաղեցնող անձին կողմէ կատարուած յայտարարութիւնները հիմնականին մէջ կը կեդրոնանան քաղաքացիի իրաւունքներու ուղղակի կամ անուղղակի ոտնահարման երեւոյթներուն վրայ: Անոր իրաւասութեան տիրոյթին մէջ է քաղաքացիներուն նկատմամբ պետական մարդոց վերաբերման, տնօրինումներուն կամ յայտարարութիւններուն գնահատական տալը:

Պարզ է, որ ընթացող քարոզարշաւը անսխալեպօրէն ատելավառ տարրեր կը պարփակէ իր մէջ: Ատելութեան խօսքի տարածումը ինքնին քրեական յանցակազմ կը պարփակէ իր մէջ: Զիմա բարձրագոյն մակարդակով կը կատարուին ատելականութեան նոր մրցանիշներ հաստատելու դէպքերը:

Մարդու իրաւունքներու պաշտպանին այս առումով ինչեցուցած ահագնազը ուշագրաւ է: Նախաբանային առումով խօսքը տարբեր թեկնածուներուն ուղղուած է՝ բռնութեան, մեհամարտի, ոչնչացնելու եւ նման միջոցներ եւ արարքներ պարփակող հռետորաբանութեան անընդունելիութիւնը ընդգծելու առումով, այնուամենայնիւ յատուկ բաժին վերապահուած է վարչապետի պաշտօնակատարին:

«Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնակատարի կողմից այսօր քաղաքացիական եւ քաղաքական վրէժխնդրութեան, քաղաքացիական վրէժի, քառային ջարդուփշուրի մասին խոստումները, հայիոյանքի բառերի օգտագործումը խիստ մտահոգիչ են, այսպիսի բառապաշար հանրային, այն էլ ընտրական գործընթացի տիրոյթ թերելն անթոյլատրելի է:

Ինչպէս էլ ուզուի է մեկնաբանուի՝ նշուած վրէժխնդրութիւնն ու քաղաքացիական վրէժն ակընյայտ **անացաղուն** են բռնութեան ու հաշուեյարդարի, իսկ **քառային** ջարդուփշուրն էլ աշխատանքային իրաւունքների զանգուածային խախտումների հետ: Այսպիսի հռետորաբանութեան իրական վտանգն այն է, որ այն աւելի է մեծացնում առանց այդ էլ առկայ լարուածութիւնը, պարունակում է իրական կեանք տեղափոխուելու վտանգաւոր **ռիսքեր**: Ճիշդ է, Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնակատարը յատուկ շեշտադրել է, որ խօսքը չի վերաբերում ֆիզիքական հաշտեյարդարի, բայց ակնյայտ է, որ դա չի չեղբացրել նշուածի վտանգաւոր ազդեցութիւնը:

Արտահերթ ընտրութիւններու կայացման անհրաժեշտութեան մասին կը խօսէր իշխանութիւնը՝ լարուած մթնոլորտը լիցքաթափելու նպատակով: Կը թուի, որ քարոզարշաւի նախօրեակին եւ մեկնարկին դրսեւորուած հռետորաբանութիւնը, հայհոյանքը, մեղադրանքները, քաղաքացիական հաշտեյարդարի կոչերը, սպառնալիքները կը ծառայեն ճիշդ հակառակ նպատակին:

Արտահերթ ընտրութիւնները նման մթնոլորտի մէջ ո՛չ միայն լարուածութեան մթնոլորտը լիցքաթափելու եւ ներքին համերաշխութիւն ստեղծելու նպատակներուն չեն ծառայեր, այլ ընդհակառակը:

Գործող իշխանութիւնը առաջին հերթին բաժանարար սահմաններու գծման փոխարէն հռետորաբանական հրադարձար պիտի յայտարարէր եւ քաղաքակիրթ բանավեճի անցումի ելքահող պատրաստէր:

Յետպատերազմեան առաջին ընտրութիւններուն առիթով ծաւալուող բանավեճերը պէտք է կեդրոնանան ստեղծուած իրավիճակի տուն տուող պատճառներուն, հանգամանքներուն քննարկման, անվտանգութեան խնդիրներուն, հայրենիքի ստացած ճակատագրական հարուածին, հողակորուստին, սահմանային միջադեպերուն, պարտութեան բոլոր պատճառներուն վրայ. եւ ապա որոնքն ենք աշխարհաքաղաքական գործընթացներու լոյսին տակ վերականգնողական աշխատանքի եւ պետականութեան վերակայացման առումով:

Քաղաքակիրթ բանավեճի մշակոյթը, արդար եւ ազատ ընտրութիւններ կազմակերպելը, ժողովրդավար հասարակարգի կայացման կարեւորագոյն բաղադրիչներ են: Անոնց ապահովումը պետութեան եւ հասարակութեան համակողմանի գիտակցութեան եւ պատրաստածութեան կախեալ է: Այդ բոլորի իրականացումին պատասխանատուութիւնը գործող իշխանութիւններուն է:

Ընտրական փուլերը՝ քարոզարշաւ, քուէարկութիւն եւ յետընտրական փուլ, պէտք է բոլոր բացառն ցնցումները: Քաղաքակիրթ եւ ժողովրդավար հիմունքով նոր էջ բանալու մօտեցումը համակողմանի է: Նոր էջը նոր իշխանութեան ձեւաւորումով պայմանաւորուած է:

«Ա.»

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ
ՀՈԼՈՎՈՅԹԻՆ ԱՇԽՈՒԺԱՅՄԱՆ
ՁՈՒԳԱՀԵՌ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐԸ
ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ



Հակառակ լաւատեսութիւն առթել փորձող լուրերուն եւ վերլուծութիւններուն, կառավարութեան կազմութեան հոլովոյթը կը մնայ փշտ ու լարուած մթնոլորտի մէջ, որ միայն կարելի է յոռետեսութեամբ բնորոշել:

Այս առումով երէկ բացայայտուեցաւ, որ նախանցեալ երեկոյեան Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժորպան Պասիլ Պալատայի իր բնակարանին մէջ ընդունած է խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի քաղաքական հարցերու օգնական Ալի Հասան Խալիլը, ինչպէս նաեւ Հրզպալլայի ընդհանուր քարտուղարի օգնական Հիւսէյն Խալիլն ու Հրզպալլայի յարաբերականի պատասխանատու Ուաֆիք Սաֆան:

Շար.ը՝ էջ 7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՄԵՄԻՆ՝ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ
ԲԵՆԻԱՄԻՆ ՊԶԱՔՃԵԱՆԻՆ ՀԵՏ

«Հայաստան 20 յունիսի ընտրութիւններու սեմին» խորագիրով «Վանայ ձայն»-էն կատարուած հարցազրոյցի մը ընթացքին օրուն հիւրը՝ **ՀՅԴ Բիւրոյի անդամ Բենիամին Պաքճեան** խօսեցաւ Հայաստանի մէջ տիրող քաղաքական ընդհանուր պատկերին, ընտրութիւններու կարեւորութեան եւ անոնց հետեւանքներուն, ինչպէս նաեւ **Դաշնակցութեան ուղեգծին մասին**: **Հարցազրոյցը վարեց «Վանայ ձայն»-ի տնօրէն Վիգէն Աւագեան**:



«**ՀԱՐՏՈՒՄ**».- Արցախեան վերջին պատերազմէն 7 ամիս ետք առաջին անգամ ըլլալով մեր դիմաց կը պարզուի պարտաւորական կացութենէն դուրս գալու կարելիութիւն մը, հայ մարդոց մէջ կը ծնի յոյս մը, թէ կարելի է իրավիճակը յեղաշրջել եւ դարձեալ ոտքի կանգնել շնորհիւ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններուն: Խօսիմք այս մասին եւ անդրադառնաք այն երեւոյթին, թէ ինչո՞ւ արտահերթ ընտրութիւններ պիտի կատարուին:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶԴՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ՀԱՂՈՐԱՎԳՈՒԹԵԱՆ ՈՂԻՒՆԵՐՈՒ ԲԱՅՄԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԻՆ ՄԷՋ ՊԵՏԸ Ե ՆԱԵՒ ՆԿԱՏԻ ԱՌՈՒԻ ՈՒՄԻՈՅ, ԹՈՒՐԵՈՅ ՅԵ ԻՐԱՆԻ ԿԱՐԾԻԸԸ»

Կ'ԸՍԵ ԼԱՐՈՎ

Դարաբաղի մէջ, ուր ռուս խաղաղապահներ տեղակայուած են, մեծ միջադեպեր չեն եղած: «Սփութիք Արմենիա» կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով:

«Այժմ մեր խաղաղապահները կը գործադրեն իրենց լիազօրութիւնը, որեւէ մեծ միջադեպ չկայ» ատիկա կ'ընդունին թէ՛ Պաքուի, թէ՛ Երեւանի մէջ: Առանձին մանր պատահարները արագ կը կարգաւորուին: Այո՛, ագրպէյմանական-հայկական սահմանին վրայ առանձին հատուածներու մէջ լարածութիւն կայ, սակայն ատիկա Լեռնային Դարաբաղի հետ կապ չունի»,



ըսած է նախարարը՝ «Փրիմաքովեան ընթերցումներ» խորհրդածողովի ընթացքին:

Շար.ը՝ էջ 7

«ԻՐԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿԱՆԽԱՐԳԻԼԵՑԻՆԸ, ԵՒ ՄԱԿ-Ի ՈՒՔՏԻ 7-ՐԴ ՅՕՂՈՒՄԵՐԻ ՀԻՄԱՍԲ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԶՆՁՈՒԹՅԱՆ»

Կ'ԸՍԵ ՈՒՐԱՆԻ

Իրանի նախագահ Հասան Ռուհանի նշեց. «Միացեալ Նահանգներ անցնող երեք տարուան ընթացքին Իրանի դէմ շղթայազերծեցին տնտեսական պատեռազմ մը, որուն նմանը աշխարհը չէ տեսած»:

«Իրանի դէմ պատերազմը կանխարգիլեցինք, եւ ՄԱԿ-ի ուխտի 7-րդ յօդուածին հիմամբ մեր դէմ հաստատուած որոշումները ջնջուեցան», նշեց ան՝ շեշտելով. «Հիւլեական համաձայնութիւնը պատժամիջոցներու ջնջման առաջնորդող միակ ուղին կը նկատուի»:

ՔՈՉԱՐԵԱՆ. «ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԻՏԻ ՈՐՈՇԷ ԻՆՉՊԻՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆԵՆԱԼ»



Երէկ՝ չորեքշաբթի, 9 յունիս 2021-ին, «Հայաստան» դաշինքը Երեւանի Նոր Նորք վարչական շրջանին մէջ կազմակերպած էր ընտրական հանդիպում մը, որուն ընթացքին դաշինքի առաջնորդ, Հայաստանի երկրորդ նախագահ Ռուպերթ Զոհարեան յայտարարեց. «Դուք կը կարծեք, որ Հայաստանը

անվտանգ երկիր՞ է, սահմանները պաշտպանաւ՞ծ են, ձեր կեանքը լաւացա՞ծ է, եկամուտները աճա՞ծ են, ունի՞ք լաւ աշխատանք, երկրին մէջ կա՞յ համերաշխու-

յին իշխանութիւն. նայեցե՞ք, թէ այդ իշխանութիւնը ի՞նչ խոստումներ տուած է ձեզի եւ անցնող 3 տարիներուն ի՞նչ ըրած է:

Ան ինչեցուց Երեւանի



թիւն, հանգստութիւն, սեր իրար նկատմամբ: Մենք, ցաւօք, բոլոր հարցերուն վերաբերեալ ունինք միայն «Ե»: Ո՛վ է այս բոլորին մեղաւորը: Ի՞նչ պէտք է ընենք մենք՝ կառուցելու անվտանգ երկիր: Մենք պէտք է հեռացնենք այս իշխանութիւնը եւ այդ մարդը»:

Ան նշեց, որ ինք 24 տարի է կ'ապրի Երեւանի մէջ: Անոր համաձայն, իրենք աշխատանքով փոխած են քաղաքին տեսակը, փորձած են ընել ամէն ինչ՝ աւելի ժամանակակից, աւելի աշխուժ ու շնչող քաղաք ունենալու համար:

Զոհարեան յայտարարեց, որ տարբեր ձեւերով կը փորձեն խանգարել «Հայաստան» դաշինքը, ապա վստահեցուց՝ չեն կրնար:

«Բայց նաեւ գիտեմ, որ բազմաթիւ մարդոց արձակած են աշխատանքէ. կ'ըսեմ հաստատ՝ կառավարութեան ձեւաւորման յաջող օրը բոլորը պիտի վերականգնին իրենց աշխատանքներուն մէջ եւ հատուցուին անոնց կորուստները, որ ունեցած են իրենց քաղաքական հայեացքներուն պատճառով: Մեր ճակատագիրը մեր ձեռքերուն մէջ է: Դուք պիտի որոշեք՝ ինչպիսի Հայաստան ունենալ», յայտարարեց Ռուպերթ Զոհարեան:

ՀՀԻ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, «Հայաստան» դաշինքի անդամ Իշխան Սաղաթելեան իր ելոյթին ընթացքին յայտարարեց, որ 3 տարի առաջ գերիքնուանքի ազդեցութեան տակ երեւանցիները նաեւ քաղաքա-

փոխադրամիջոցներու չլուծուած հարցը, բազմաբնակարան շէնքերու վերելակներու հարցը, մեթրոյի կայարանը. անցնող 3 տարիներուն Երեւանի մէջ նոյնպէս անտրութիւն կայ, ըսաւ ան, ասիկա է այս իշխանութեան նկարագիրը: «Ռեւել բանական մարդ հաճոյք կը ստանայ կառուցել, այս իշխանութիւնը հաճոյք կը ստանայ քանդել: Միշտ կը հպարտանան՝ քանիցհիք ասոր տունը, անոր տունը: Այս իշխանութիւնը շատ մարդոց տուներ քանդած է եւ այդ պատճառով պէտք է պատասխան տայ», ըսաւ Իշխան Սաղաթելեան:

Ան նկատել տուաւ, որ այս օրերուն իշխող խմբակը Հայաստանի մարզերուն մէջ կ'ըսէ, որ ճամբաներ կառուցած է, դպրոցներ կառուցած է:

«Այս իշխանութիւնը չ'ըսեր, թէ քանի դպրոց նուէր տուած է թշնամիին. 107 դպրոց, 17 մանկապարտէզ: Այս իշխանութիւնը պարտաւոր է նայիլ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիի աջքներուն եւ ըսել՝ քանի տուն նուէր տուած է թշնամիին: Կը խօսին այգիներու ոռոգման մասին. պէտք է այս հողաւորները նային Հայաստանի քաղաքացիի աջքներուն մէջ եւ ըսեն՝ քանի հեկտար նուէր տուած են Ալիեւին», ըսաւ Իշխան Սաղաթելեան:

Ան ընդգծեց, որ իրենք պիտի տան այս հարցումներուն պատասխանը, այլ ոչ թէ Հայաստանի քաղաքացիներն ըսել խնդրեն,

Շար.ը՝ էջ 8

ՆԱԽԱԳԱՅ ԱՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԶԻՆ ԿԱՏԱՐԵԱԼ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵՅ



Հանրապետության նախագահ գոր. Միշել Աուն երեկ ընդունեց կրթության եւ բարձրագոյն ուսման նախարարի պաշտօնակատար Թարեք Մաժգուպը, որուն հետ քննարկեց կրթական մարզին վերաբերող հարցեր:

Ներկայ գտնուեցան նաեւ նախարարութեան ընդ-հանուր տնօրէն Ֆատի Եարաք եւ նախարարութեան խորհրդատուութեան բաժանմունքի պատասխանա-տու Յիլտա Խուրի:

Հանդիպումին ընթացքին նախագահ Աուն կա-տարեալ գորակցութիւն յայտնեց կրթական մարզին եւ անոր բաղկացուցիչ մասերուն:

Նախագահ Աուն ընդգծեց, որ կրթական մարզը Լիբանանի կենսական ոլորտն է եւ երկիրն ու անոր տնտեսութիւնը բարձր պահող հիմնական մարզը:

Հանդիպումին ընթացքին Մաժգուպ ընդգծեց պե-տական քննութիւնները կայացնելու կարելորութիւ-նը:

Ան մաղթեց, որ պետական քննութիւնները հեզա-սահ ընթանան եւ յաջող ընթացք ունենան՝ հաստա-տելով, որ պետական քննութիւնները ազգային պար-տաւորութիւն են եւ պէտք է կայանան:

Հանդիպումէն ետք իր կատարած յայտարարու-թեան մէջ Մաժգուպ յայտնեց, որ նախագահ Աունին ներկայացուցած են յառաջիկայ կրթական տարեշըր-ջանին համար որդեգրուած նախապատրաստու-թիւնները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ...

Շարունակուած Ա. Էջէն

ցոյց տուաւ, որ Դաշնակցութիւնը ճիշդ էր. արդարեւ, այս իշխանու-թիւնները ո՛չ միայն չըջացան, այլեւ անոնք ցոյց տուին, որ անկա-րող էն երկիրը ղեկավարելու, չունին տեսլական, չունին յստակ ծրագիր Դարաքաղի հարցի լուծման գծով, ընդհակառակն՝ իրենք ազգակործան գործընթացի մը գործակատարը դարձան, եւ այդ ընթացքը մեզ հասցուց հոն, ուր որ ենք այսօր։ Պարտուողական յայտարարութեան ստորագրութենէն ետք ԴՅԴ-ն յաջողեցաւ հա-մախմբել 17 ընդդիմադիր կուսակցութիւններ, որոնք ձեւաւորեցին Դայրենիքի փրկութեան շարժումը՝ նպատակ ունենալով Արցախի պատերազմէն ու խայտառակ պարտութենէն ետք նոր կառավա-րութեան մը ձեւաւորումով հասարակութեան տարի մը առիթ տալ՝ կացութիւնը կայունացնելու, ցնցուած մթնոլորտէն դուրս գալով աւ-ելի առողջ մթնոլորտի մէջ արտահերթ ընտրութիւններ կազմակեր-պելու։ Սակայն ատիկա տեղի չունեցաւ, այլ, իշխանութիւնները անմիջապէս դիմեցին արտահերթ ընտրութիւններու տարբերակին։ Այս ընտրութիւնները, արտահերթ ըլլալով հանդերձ, իրենց էութե-ամբ արտակարգ են, որովհետեւ կը գտնուինք մեր անկախութենէն ի վեր Նախադէպը չունեցող կացութեան մը առջեւ։ 90-ականներուն սկիզբը ծայր առած արցախեան պայթաղը յաջողեցաւ ապահովել Դայաստանի Հանրապետութեան անկախացումը, Արցախի Հան-րապետութեան կայացումը։ Երեսուն տարիներ շարունակ կարո-ղացանք յաջողութիւններ ապահովել, պահպանել, աճեցնել ու զարգացնել մեր հայրենիքը, սակայն այս իշխանութիւնները 44 օրուան ընթացքին չէզոքացուցին այս յաջողութիւնները։ Այսօր Ար-ցախը կորսնցուցած է իր տարածքէն 11.000 քառակուսի քմ, Արցա-խի ինքնորոշման իրաւունքը, կարգավիճակը լքօրէն խնդրոյ առարկայ են։ Լուրջ տազնապի մէջ է Հայաստանի տնտեսութիւնը, վտանգուած են սահմաններն ու սահմանակից համայնքներու բնակչութիւնը, հասարակութիւնը երկփեղկուած է ու ատելութիւնը համատարած։ Պէտք է անյապաղ ձերբազատիլ այս իշխանութիւն-ներէն, թօթափել պարտուածի հոգեվիճակը եւ անցնիլ կառուցողա-կան աշխատանքի։

Հ.- Ներկայ իշխանութիւնները կը պատրուակեն, թէ Նախկին իշ-խանութիւնները չարոսնեցին, որ աշխատին՝ անոնք ունեցած լծակներուն պատճառով, բայց երեք տարիները բաւարար չէի՞ն, որ իրենք բան ու ներկայացնէին մեր ժողովուրդին։

Բ. Պ.- Ըիշդ չէ քսել, որ այս երեք տարուան ընթացքին առիթ չտրուեցաւ ներկայ իշխանութեան, ընդհակառակն՝ անոնք ժողովը-դային [այն յենարանը ունէին, սակայն այդ յենարանը իրենք մսխե-ցին։ Հասարակութիւնը մեծ յոյսեր կապած էր ու կ'ակնկալէր, որ այս իշխանութեան օրօք աւելի արդար ու ապահով պայմաններ կը ստեղծուին, երկիրը տնտեսական վերելք կ'ապրի, բանակը կը հզօ-րանայ եւ ինք խաղաղ ու բարօր կեանք մը կ'ապրի։ Սակայն հակա-ռակ պատահեցաւ, կազմակերպուած ձեւով պետական կառոյց-ներու կազմաքանդումը տեղի ունեցաւ, ժողովրդավարական հիմ-նական սկզբունքները ոտնակոխելով դատարաններու ու Ազգային ժողովի գործունեութիւնը խափանուեցան, սահմանադրութեան անտեսումով նշանակումներ, գործէ արձակումներ ու որոշումներ կայացուեցան, առանց դատական հետապնդումներու վճիռներ արձակուեցան, ազատ միտքն ու կարծիքը հալածուեցան։ Մէկ խօսքով՝ միապետութիւն հաստատուեցաւ, մէկ մարդու մէջ կեդրո-նացան գործադիր, օրէնսդիր ու դատական համակարգերը։ Որդեգ-րուեցաւ հայ իրականութեան ասանդութիւններուն ու արժեքներուն խտոր «Բաց հասարակութեան» պետականաշինութեան ծրագի-րը, ուր համամարդկային սկզբունքներու կարգախօսներուն ներ-քեւ, վարկաբեկութեան ազգային արժեքները, պատմութիւնը, հաւ-ատքը, հերոսները։ Իրողութիւնը տարբեր չէր նաեւ արտաքին ճա-կատի վրայ։ Հայաստանը կորսնցուց իր երբեմնի բարեկամներն ու դաշնակիցները։ Այս իշխանութիւնները ճիգ չխնայեցին մեր ռազ-մավարական դաշնակից Ռուսիոյ Դաշնութեան հետ յարաբերու-թիւնները գերոյացնելու։

Փոխվարչապետի, Ազգային անվտանգութեան քարտուղարի, Ազգային ժողովի նախագահի եւ այլ հիմնական պաշտօններու նշանակուեցան իրենց հակառուսական շէշտուած կեցուածքներով յայտնի անձեր։

Միջազգային ատենաներուն մէջ բազմիցս Հայաստանի Հանրա-պետութեան ներկայացուցիչներ թեր քուէարկեցին հակառուսա-

ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 160-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներքին ապահովու- թեան ու-ժերու հիմնադրութեան 160-ամ-եակին առիթով վարչապետի պաշտօնակատար Հասսան Տիապ շնորհաւորեց այդ ուժերը՝ ընդգծե-լով, որ անոնց գոհողութիւնները կը միախառնուին Լիբանանի պատմութեան, ներկային եւ ապա-գային հետ։

«Ձեզմէ իւրաքանչիւրը կը հըս-կեն լիբանանցիներու անվտան-գութեան, լիբանանեան ընկերու-թեան եւ երկրին հաստատութիւն-ներուն պաշտպանութեան։

Ձեր հիմնադրութեան տօնը առիթ մըն է վերոյիշելու համար, որ դուք մեծ ճիգեր ի գործ կը դնէք վեհ հայրենիքի մը համար, ինչ ալ ըլլան դժուարութիւնները։ Պա-հանջուածը այսօր այն է, որ չըլեցն Լիբա-նանը եւ կերտնեց մեր երազներուն նմա-նող պետութիւն մը, այլ խօսքով՝ օրէնքի, հաստատութեանական, արդարութեան, ապահովութեան եւ անվտանգութեան պետութիւն մը, որ կը յարգէ իր գաւակ-ները՝ անոնց շնորհելով ընկերային կա-յունութիւն, ինչպէս նաեւ կերտելու հա-մար փտածութենէ ձերբազատած պե-տութիւն մը։ Լիբանանի հանդէպ ձեր հաւատքը պէտք է պահեք՝ վերակառու-ցելու համար պետութիւնը։ Դուք էք հայ-րենիքը եւ հիմնական օղակը երկրին պե-տութեան, որ պէտք է փրկուի փտածու-թեան պետութենէն։

Իր կարգին, ներքին գործոց եւ քաղա-քապետութեանց հարցերու նախարարի պաշտօնակատար Մոհամետ Ֆահմի շնոր-հաւորեց Ներքին ապահովութեան ուժերը՝ հաստատելով, որ ապահովութիւնը պարտք մըն է, որուն տեղ պէտք է կանգնի։ «Վստահ չեղէք, որ հակառակ տագնապ-ներու սրումին, դուք պիտի մնաք ձեր հայ-րենիքի պաշտպանութեան առաջնագիծին վրայ, ինչպէս նաեւ լիբանանեան ընկերու-



թեան պիտի պարգեւեք երկրին ապահո-վութիւնը», հաստատեց ան։

Ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-գորա-վար Իմատ Օսման այս առիթով երէկ ծաղկեպսակ մը գետնդէց Ներքին ապա-հովութեան ուժերու գլխաւոր կեդրոնա-տեղիին մէջ գտնուող յուշարձանին՝ առ ի յարգանք հայրենիքին ի խնդիր գոհուած նահատակներուն յիշատակին։

Նշենք, որ Օսման նախանցեալ օր հրապարակած էր «Օրուան հրահանգ»-ը, որուն մէջ շեշտած էր, թէ Լիբանանի դի-մագրաւած այս տագնապալի օրերուն Ներքին ապահովութեան ուժերը անձնա-տուր պիտի չըլլան։

Ան կոչ ուղղած էր Ներքին ապահովու-թեան ուժերուն ըլլալու զգաստ եւ իմաս-տուն՝ խոհեմութեամբ շրջանցելու հա-մար հայրենիքին դիմագրաւած այս զգայուն փուլը։

«Ներքին ապահովութեան ուժերը պի-տի փաստեն, որ իրենց ուժերով պիտի կարենան դուրս գալ այս փապուղիէ։ Անոնք պատմութեան պիտի փաստեն, թէ ինչքա՜ն տագնապները սրին, ան-վտանգութիւնը կը մնայ կարմիր գիծ, իսկ Ներքին ապահովութեան ուժերը կը մնան հայրենիքին եւ խաղաղութեան պատկերը», շեշտեց Օսման։

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

●ԱՌՈՂԶԱՊԱՅՈՒԹԵԱՆ նախարարութեան տեղե-կութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ Նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Քորո-նա» ծաիրով 139 վարակուածներ եւ մահացած 6 ու-րիշներ։

●ՄԱՐՈՆԻ համայնքի Պշարա Ռայի պատրիար-քին նախագահութեամբ երէկ սկսաւ մարոնի առաջ-նորդներու տարեկան հոգեւոր սիւնհոդոսը, որուն

Շար.ը՝ էջ 7

ՄԱՀԱԶԴ

ԼՕԽ-ի Շրջանային վարչութիւնը կը գուժէ իր նախկին անդամներն

ՊԵՐՃՈՒՀԻ ՊԷՕՃԷՔԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 9 յունիս 2021-ին։

ՄԱՀԱԶԴ

ԼՕԽ-ի «Շուշանիկ» մասնաճիւղի վարչութիւնը կը գուժէ իր շրջանի վաստակաշատ նախկին ատենա-պետին՝

ՊԵՐՃՈՒՀԻ ՊԷՕՃԷՔԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 9 յունիս 2021-ին։

ՄԱՀԱԶԴ

ԲԱՅԼ-ի խնամակալութիւնը եւ տնօրէնութիւնը կը գուժեն իրենց ընկերային ծառայութեան բաժան-մունքին եւ ԲԱՅԼ-ի ծերանոցի երկարամեայ եւ վաս-տակաշատ պատասխանատու

ՊԵՐՃՈՒՀԻ ՊԷՕՃԷՔԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 9 յունիս 2021-ին։

ՄԱՀԱԶԴ

Տիար Սարգիս Պեօճեքեան Տեր եւ տիկին Ժիրայր Պեօճեքեան եւ զաւակուսք Տեր եւ տիկին Տիգրան Պեօճեքեան եւ զաւակուսք Տեր եւ տիկին Արշակ Մկրտիչեան եւ զաւակուսք Տեր եւ տիկին Անդրանիկ Մկրտիչեան եւ զաւակուսք Տիկին Ժանէթ Պեօճեքեան եւ զաւակուսք Տեր եւ տիկին Ստեփան Պեօճեքեան եւ զաւակուսք Պեօճեքեան եւ Մկրտիչեան ընտանիքներ Պեօճեքեան եւ Սարգիսեան ընտանիքները եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ՊԵՐՃՈՒՀԻ ՊԷՕՃԷՔԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 9 յունիս 2021-ին, յետ կարճատեւ հիւանդութեան։

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կա-տարուի այսօր՝ հինգշաբթի, 10 յունիսին, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Պուրճ Համուտի Հայ կաթողի-կէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ գերեզմանատունը։

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազդ։
- Յաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան, Ս. Փրկիչ եկեղեցւոյ սրահին մէջ, միևնչեւ երեկոյեան ժամը 7:00, կամ ալ հեռաձայնով, Տիգրան՝ 03/452348։
- ՇՄԼՕԹ.- Փոխան ծաղկեպսակի՝ նուիրատուու-թիւնները կատարել ԲԱՅԼ-ի ծերանոցին։

ՄԱՀԱԶԴ

Տեր եւ տիկին Վահէ եւ Նայիրի Խաչատուրեան Տիար Ճօ Խաչատուրեան Տիար Արա Խաչատուրեան եւ զաւակները՝ Ալեքս, Թայլին եւ Ալին

Տեր եւ տիկին Փիեռ եւ Սօսի Փոլատեան եւ զաւակները՝ Ռազմիկ, Բաֆֆի եւ Թամար
Տեր եւ տիկին Բաֆֆի եւ Սեւան Պաղճեան եւ զաւակները՝ Արամ եւ Ալեքս
Խաչատուրեան եւ Մարթայեան ընտանիքներ
Եսիգոմուշեան եւ Պաղճեան ընտանիքներ
Էպիլդաթեան եւ Հաննեսեան ընտանիքներ
Երէցեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց զակին, եղբօր, եղբօր զակին, քրոջ զակին եւ հարազատին՝

ՄԵՐԺ ՎԱՀԷ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ (Ծնեալ՝ 1990-ին)

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 9 յունիս 2021-ին, ինքնաշարժի արկածի պատճառով։

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կա-տարուի այսօր՝ հինգշաբթի, 10 յունիսին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆըրն Շըպպեքի Ազգային գերեզ-մանատունը։

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազդ։
- Նկատի ունենալով «Քորոնա» ծաիրի համաճա-րակին ստեղծած դժուարութիւնները հանգուցեալին ընտանիքը ծառակցութիւնները պիտի ընդունին եւ-ռաձայնով։

Վահէ՝ 03-622643, Նայիրի՝ 03-883935։

Շար.ը՝ էջ 8

ՔՆՆԱԴԱՏԵ՛Լ. ԻՆՉՈ՞Ւ ԵՒ ԻՆՉՊԵ՛Ս

Հաւաքական մեր տկարութիւններն ու թերութիւնները յաճախ հետեանք են առողջ քննադատութեան բացակայութեան:

Քննադատութեան պակասը զգալի է մեր իրակաւնութեան մէջ, որովհետեւ գրաւոր թէ ելեկտրոնային մամուլի էջերէն կամ հրապարակային բեմերէն հազաւդէպօրէն կը լսուին քննադատական ձայներ: Փոխարէնը՝ մարդիկ կա՛մ ընդհանրապէս լուռ կ'անցնին սխալներու վրայէն եւ կա՛մ ածան բամբասանքով քննադատութիւնը կը պարպեն իր իմաստէն:

Քննադատել կը նշանակէ թափանցել հարցերուն խորքը, հաշիւ ու բացատրութիւն պահանջել եւ տիրող կացութեան մը հիմնաւորեալ բարեփոխման ձեռնարկել: Քննադատութիւնը, իբրեւ հանրային թերութիւններու սրբագրութեան միջոց, ցուցանիշ է քաղաքացիական հասունութեան:

Մենք չենք ապրիր իտալական միջավայրերու մէջ: Ու եթէ չենք ապրիր իտալական միջավայրերու մէջ, այդ կը նշանակէ, որ մեր շուրջը կան մտահոգիչ բազմաթիւ երեւոյթներ, որոնց հանդէպ չենք կրնար լուռ մնալ:

Հանրային թերութիւններու, հաւաքական սխալներու եւ բարոյական խախտումներու հանդէպ լռութիւնը յանցաւորին մեղսակցութիւն է: Անուն կարելի չէ տալ նման պարագաներու երեսն եկող շահակցութիւններուն եւ շողոքորթութիւններուն:

Քննադատութենէ պէտք չէ վախճալ: Առողջ քննադատութիւնը մեկնակէտն է առողջ հաւաքականութեան մը ստեղծման, պայմանաւ որ սակայն... քննադատողները իրենց քննադատութիւններուն հետ մէկտեղ ներկայացնեն նաեւ հարցերու իրենց լուծումները, փոխընտրանքները եւ անոնց համաձայն աշխատելու իրենց պատրաստակամութիւնը:

Այլապէս, անխորշ եւ անարձագանգ կը մնան քննադատութիւնները բոլոր անոնց, որոնք հոս ու հոն դժգոհութիւններ կը յայտնեն, ախտաճնաչումներ կը կատարեն, մինչեւ իսկ հարցերու սկզբունքային լուծումներ կ'առաջարկեն եւ, սակայն, կը խուսափին որեւէ պատասխանատուութիւն ստանձնելէ:

«Ամէնէն դժուարը ինքզինք ճանչնալն է, իսկ ամէնէն դիւրինը՝ ուրիշներուն խրատ տալը», ըստած է

Վ. ՄԱԳԵՆՍ

Շար.ը՝ էջ 6

ԿՇՈՌՅԹԻ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ



Հայաստանի մէջ կատարուած վերջին հարցախոյզներուն համաձայն, վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի ժողովրդականութիւնը կը շարունակէ անկում կրել: Դրական երեւոյթ մը, որ կրնայ ցուցանիշ ըլլալ, թէ Հայաստանի ժողովուրդը կ'արթնայ իր թմբիրէն, կը սթափի իր անտեղի հիփոտագումմէ եւ ատոր իբրեւ հետեանք՝ իր **գոմպիացւած** իրավիճակէն:

Հայաստանաբնակ ժողովուրդը 44-օրեայ պատերազմի աղէտէն եւ անոր յաջորդած իրերայաջորդ **սկանտալներէն** եւ Սիւնիքի ու Գեղարքունիքի մէջ զարգացումներէն ետք սկսած է գիտակցիլ, որ Դանիոյ թագաւորութեան մէջ փտած բան մը կայ, որ՝ Փաշինեանը «մրիկիչ»-ը չէ, այլ՝ «կէղծ Ջրիստոս» մը, աղէտաբեր մը, որ կրնայ իր մաշկը փոխել, սակայն՝ ոչ իր եւութիւնը:

Արցախեան Բ. պատերազմը յաւերժօրէն խարանք անոր ճակատը. ան խորհրդանիշ է ու մարմնաւորում՝ ձախողութեան, պարտութեան, Լիբանանէն աւելի մեծ տարածքի կորուստի, հողատուութեան եւ հազարաւոր կէանքերու կորուստի:

Աւելին... Փաշինեան իր գործերով եւ խօսքերով փաստեց, որ իրեն համար անարժեք է հայրենի հողը, ուստի եւ, ըստ իրեն, չ'արժեր տարուան կէը ձիւնածածկ եղող լեռներու համար կամ Սեւ լիճի 30 առ հարիւրի համար պայքարիլ: Դժբախտաբար թշնամին իրաւամբ կը գիտակցի այդ «անկարելորդ» տարածքներուն ռազմավարական արժեքին ու մեծ ախորժակով ու հաճոյքով կու կու տայ զանոնք:

Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնակատարը աշխարհի վրայ միակ քաղաքական գործիչն է, որ կը հաւատայ եւ հրապարակաւ կը յայտարարէ, թէ պարտութիւն ու ատոր հետեանքները հպարտալի են... Արդեօք խորհրդարանական ընտրութիւններուն եթէ պարտութիւն կրէ, դարձեալ հպարտ պիտի զգա՞ր:

Կը մնայ տեսնել, թէ նիկոլապաշտներուն ու տակաւին չկողմնորոշուածներուն սթափումը որքա՞ն թափ ու կշռոյթ պիտի ստանայ եւ ըստ այնմ ազդէ 20 յունիսին նախատեսուած խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքին վրայ: 20 յունիսին կայանալիքը սովորական ընտրութիւններ չեն: Փաշինեանի եւ Հայաստանի ապագան գիրար կը հակասեն. եթէ առաջինին համար «ապագայ կայ», ապա կը նշանակէ, որ երկրորդինը մեծ հարցականի տակ է. ուստի պետութեան, պետականութեան ու սերունդներու ապագան ապահովելու համար հարկ է ունենալ «առանց Նիկոլի Հայաստան»:

ՎԱՐՎԱՐ ԵՄՄԻԵՆՆ

«ՕՐՕՐ» ԵՒ «ԱՐԱՐԱՏ» ՆՈՐ ՄԿԱՒԱՌ-ԱԿՆԵՐՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ՝ ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ ՄԿՐՏԻՉ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՀԵՏ

«ԱՇԴԱԿ».- Պատմեցէ՛ք երաժշտական ձեր անցած ճանապարհին մասին:

ՄԿՐՏԻՉ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ.- 2000 թուականէն սկսեալ կը դասաւանդեմ Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճին մէջ, ուր նաեւ կը վարեմ կիթառի ամպիոնի վարիչի պաշտօնը: 2003-էն ի վեր դասախօս եմ Լիբանանի պետական բարձրագոյն երաժշտանոցին եւ կը դասաւանդեմ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքին մէջ եւս:

2007 թուականին հիմը դրի եւ գեղարուեստական ղեկավարութիւնը ստանձնեցի Համազգայինի «Բ. Կանաչեան» երաժշտական քոլեճի կիթառահարներու համոյթին, իսկ 2011-ին՝ «Տաւիղ» նուագախումբին: Նախանշեալ տարի՝ 2019-ին, հիմնեցի «ԱՐԱՐԱՏ» լարային հնգեակը:

Համետու մասնակցութեամբ ներդրում ունեցած եմ, իբրեւ դատական կազմի անդամ, զանազան միջազգային մրցոյթներու, ինչպէս նաեւ իբրեւ մենակատար ելոյթ ունեցած եմ Լիբանանի պետական սենեկային նուագախումբին հետ:

Մենահամերգներով նուագահանդէսներ ունեցած եմ Լիբանանի, Հայաստանի, Զանաւտայի, Ֆրանսայի, Յունաստանի, Շուէտի եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ:

2002-ին Կիլիկիոյ թեմի կաթողիկոսութեան հրատարակութեամբ լոյս տեսած է «Pieces From The Armenian Liturgy And Songs For Guitar» գիրքը:

Իսկ 2006-ին Համազգայինի եւ «Pomegranate Music»-ի հետ գործակցաբար ձայնագրած եմ առաջին խտասալիկ, որ կը պարունակէ դասական կիթառի երաժշտութիւն:

2006 եւ 2007 թուականներուն գնահատագիր ստացած եմ Լիբանանի պետական համալսարանի գեղարուեստի բաժանմունքին կազմակերպած փառատօներէն՝ «Օփըն տոր ֆէսթիվը»-էն, իսկ 2006-ին պարգեւատրուած եմ Հայ աւետարանական քոլեճին կողմէ:

2008-ին Աթէնքի մէջ ձայնագրած եմ երկրորդ խտասալիկս՝ «Kaleidoscope» խորագիրով, որ լոյս տեսած է Միացեալ Նահանգներու մէջ, հովանաւորութեամբ «Pomegranate Music»-ի:

2010-ին հրապարակած եմ դասական կիթառի նուիրուած տետրիկ մը՝ Համազգայինի հովանաւորութեամբ:

2011-ին, Զանաւտայի Թորոնթօ քաղաքին մէջ ունեցած փայլուն նուագահանդէսէ ետք պարգեւատրուած եմ «House of Commons»-ի ներկայացուցիչ, Սքարպօ-Ամէսըրի խորհրդարանի անդամ Ճիմ Զարիաճիաննիսի կողմէ, իսկ 2012-ին, Բարիլը ունիմ յայտնելու, որ իբրեւ գնահատագիր շնորհուեցաւ ինծի «Քանատական հպատակութեան իրաւունքներու պայմանագիր»-էն օրինակ մը՝ թարգմանուած հայերէնի:

Շուէտի մէջ լոյս տեսնող յատուկ դասական կիթառի «Կիթառ Օ Լուրճ» պարբերաթերթին մէջ 2016-ին, լոյս տեսած է իմ մշակութամբ Բարսեղ Կանաչեանի «Օրօր»-ը: Հոս կ'ուզեմ մէջբերել, որ բոլոր այն հայկական երգերը կամ երաժշտութիւնները, որոնց մշակումը կատարած եմ, առաջին անգամն է, որ կիթառով կը նուագուին ու կը ներկայացուին հանրութեան: Նախապէս անոնք կա՛մ եղած են երգեր, եւ կա՛մ ներկայացւած են երաժշտական այլ գործիքներով:

Շարունակեմ. 13 ապրիլ 2019-ին Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի կիթառահարներու համոյթը, իմ ղեկավարութեամբ, իր մասնակցութիւնը բերաւ «Վերածնունդ» մրցում-փառատօնին, որ կայացաւ Երեւանի «Սայաթ Նովա» երաժշտական դպրոցին մէջ: Այս մրցումին գրաւեցին առաջին դիրքը, լարային գործիքներու կիթառի համոյթային խումբերու բաժինին մէջ:

2018-ին եւ 2019-ին հրաւիրուեցայ Հայաստան՝ իբրեւ Միջազգային կիթառի մրցոյթի դատական կազմի անդամ:

Հրաւեր ստացած եմ նաեւ Յունաստանէն՝ իբրեւ Միջազգային կիթառի մրցոյթի դատական կազմի անդամ: Այս մրցոյթի ընթացքին աշակերտներուն տուած եմ կիթառի վարչատնօրէնական օրհներ (մասթրքլասներ) եւ ունեցած եմ նուագահանդէս մը:

Համազգայինը եւս պարգեւատրեց զիս, երբ մեր աշակերտները Հայաստանի մէջ Միջազգային մրցոյթին առաջին մրցանակը նուաճեցին:

Պարգեւատրուած եմ նաեւ Լիբանանի պետական բարձրագոյն երաժշտանոցին կողմէ՝ միջազգային փայլուն գործունեութիւն ունենալու համար:

«Ա.».- *հօսեցէ՛ք ձեր հրապարակած*



«Օրօր» եւ «Արարատ» սկաւառակներուն մասին:

Մ. Մ.- Նախ յայտնեմ, որ այս սկաւառակներս լոյս տեսան ԳՈՂԱՐ-ի հովանաւորութեամբ, առաջինը՝ «Օրօր», իսկ երկրորդը՝ «Արարատ» խորագիրներով: «Օրօր»-ը դասական մենակատարում է **քլասիք** (սոլօ), մէկ կիթառով նուագած եմ, իսկ «Արարատ»-ը նուագներ են, որոնք կատարած եմ լարային հնգեակով:

«Օրօր»-ը կը պարունակէ դասական եւ հայկական երաժշտութիւն: Հայկականները իմ մշակումներս են, մինչ «Արարատ»-ը կը պարունակէ աւելի նորարական, արդի (մոտորն) երաժշտութիւն՝ հայկական, լատին, սպանական, որոնք եւս մշակուած են իմ կողմէս:

«Ա.».- *Երաժիշտի մը համար ի՞նչ պէտք է յառաջդիմելու:*

Մ. Մ.- Երաժիշտի մը համար կը կարծեմ նախ պէտք է Աստուծոյ կողմէ պարօթութիւն եւ շատ աշխատասիրութիւն, որպէսզի կարենայ նուաճել վերելքներ:

«Ա.».- *Ինչպէ՞ս ձեւաւորուած է «Արարատ» հնգեակը: Ինչո՞ւ «Արարատ» կոչեցիք զայն:*

Մ. Մ.- «Արարատ» հնգեակը հիմնեցի 2019-ին: «Արարատ» հնգեակի հիմնադրութեան նպատակը այն էր, որ կարենային եւ շատ աշխատասիրութիւն, որպէսզի կարենայ նուաճել վերելքներ: Իսկ անուանումը, թէ հնգեակը ինչո՞ւ «Արարատ» կոչած եմ, պարզ այն պատճառով, որ նախ՝ հնգեակով ներկայացնելիք աշխատանքս հայկական մշակումներ էին, ինչպէս նաեւ մշակած գործիս խորագիրը «Արարատ» էր, ուստի մտադրեցի հնգեակն ալ նոյն անունով ու մանաւանդ հայկական անունով կոչել:

«Ա.».- *Ի՞նչ ունիք ըսելու նոր սերունդի այն երիտասարդներուն, որոնք երաժշտութիւնը ընտրած են իբրեւ ասպարեզ: Ինչպէ՞ս պէտք է յարստեցնել նորարարութիւններ ձեռք բերելու համար:*

Մ. Մ.- Շատ պարզ եւ յստակ՝ կը թելադրեմ հայ երիտասարդութեան, որ ընդհանրապէս պահպանեն ինիւ, բայց ստեղծագործեն նորովի:

«Ա.».- *հօսեցէ՛ք ձեր նոր ծրագիրներուն մասին:*

Մ. Մ.- Նոր ծրագիրներ միշտ կան: Եւ, որպայի մէջ ունիմ համերգներու շարք մը, ինչպէս նաեւ հրաւերներ ստացած եմ եւրոպական միջազգային մրցոյթներու կազմակերպիչ մարմիններու կողմէ՝ իբրեւ այդ մրցոյթներուն դատական կազմի անդամ:

Աւարտին, կ'ուզեմ յատուկ շնորհակալութիւն յայտնել «Ազգակ» օրաթերթին, այս շահեկան հարցազրոյցին համար:

Հարցազրոյցը վարեց՝
ՄԱՐԻՆԱ ՀՍԵՄՍՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ «ՓԻ. ԱՐ.»
ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԵՆՈՒԹԻՒՆ

«ԱԶԴԱԿ»-Ը՝ ՍՓԻԻՌՔԻ ԼԱՒԱԳՈՅՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑ

Հայկական «Փի. Ար.» մրցանակաբաշխութեան պատասխանատուները յայտարարեցին հանրային կայքերու եւ հաղորդակցութեան ոլորտի 2021 թուականի հետազոտութիւններուն արդիւնքները, որոնց համաձայն, 2021 թուականի սփիւռքի լաւագոյն լրատուեցաւ «Ազգակ» օրաթերթը:

Հայկական «Փի. Ար.» կազմակերպութեան նախաձեռնութեամբ աւանդական դարձած այս մրցանակաբաշխութեան նպատակն է լուսարձակի տակ առնել եւ արժեւորել Հայաստանի հաղորդակցութիւններու ոլորտին մէջ արձանագրուած ձեռքբերումները: Հայկական «Փի. Ար.» կազմակերպութեան հետազոտական խումբին կողմէ 2020 թուականի յունւարէն 2021 թուականի ապրիլ երկարող ժամանակաշրջանին ուսումնասիրուած են համապատասխան խումբերու մէջ ներառուած կառոյցներուն աշխատանքները, այս նպատակով կատարուած են մանրակրկիտ հարցազրոյցներ, հարցաթերթեր ամբողջացած են:



Հետազոտութիւններու լոյսին տակ մրցանակաբաշխութեան իրաքանչիւր անուանակարգին մէջ ընտրուեցաւ լաւագոյն ետեակը, որուն մէջէն ալ՝ տարւան յաղթողը, գործողեց միջազգային մասնագիտական յանձնաժողովը:

Տարուան լաւագոյն երեք լրատուամիջոցները նկատուեցան «Անալոստ» օրաթերթը (յաղթող), «Երկիր մեդիա»-ն եւ «Շոդակար»-ը, իսկ տարուան Սփիւռքի լաւագոյն լրատուամիջոցները՝ «Ազգակ»-ը

Շար.ը՝ էջ 6

ՄԵՐ ԲԱԿԸ

Հաւանաբար Պուրճ Համուտի գետնայարկ տուններէ շատերը բակ ունին: Ամէն մէկ բակ ալ, իր կարգին, ունի իր պատմութիւնները: Ամէն մէկ բակի պատմութիւնը զգացական եւ գիտակցական իրայայտուկ ապրումներ կու տան քեզի: Երբեմն հոտ մը, ձայն մը, գոյն մը, թերթի հիւն կտոր մը, նկար մը քեզ կը տանի հեռուները, եւ դուն քեզ կը գտնես հոն, ուր անմեղ ու չինջ օրեր անցուցած ես:

Վերջերս տանս պատշգամբ կեցած էի, եւ յանկարծ ինքնաշարժ մը անցաւ՝ բարձրածայն երաժշտութեամբ, հայերէն երգով մը...

Այդ երգը զիս տարաւ տարիներ առաջ, երբ մութկոծումի ծանր օրերն էին, եւ մեր տունը՝ իբրեւ գետնայարկ, աւելի ապահով կը նկատուէր, ուստի յաճախ հոն կը համախմբուէին դրացիները, եղբայրներու ընկերները, հարազատներ: Հիւսադարարի պահերուն, երբ քիչ մը իր հանդարտութեամբ մէն բան, մայրս քանի մը քիչ միւս կը բերէր, եւ այդ բանին մէջ խորոված կ'ընէինք:

Մինչ տղաքը իրենց պլոթի մրցաշարքին կը սկսէին, կիները ներս սենուղիները կը պատրաստէին, եւ մենք յարմար առիթին դուրսը նեղ տեղ մը կը զըտնէինք, որպէսզի ոտնազնդակ խաղաք մինչեւ յաջող ժապկոծումի **առունկին** սկսիլը:

Այսպէս, աւելի քան եօթը տարիներ՝ մերթ պատերազմ, մերթ խաղաղութիւն կարգավիճակով այդ բակին մէջ կը մեծնայինք եւ յաճախ այս երաժշտութիւնը կը լսէինք:

Տարիներու թաւալումով տանտերը Աստրալիա գնաց, տարեցները՝ անդի աշխարհ, աւելի ուշ մէկ-մէկ բոլորը զաղթեցին, ու մնաց բակը՝ իր մաշած պատերով, չորացած ծաղիկներով եւ ծանր լռութեամբ: Այդ բակերուն մէջ ամբողջ սերունդ մը մեծցաւ՝ առանց ելեկտրականութեան, առանց համացանցի, առանց տաք ջուրի, երբեմն նոյնիսկ՝ առանց ջուրի, բայց բոլորին դէմքերէն ժպիտը՝ ապրելու, անպակաս էր, իսկ ապրելու կամքը՝ շատ զօրաւոր:

Այսօր յարադարաբար աւելի լաւ պայմաններու մէջ ենք, սակայն առանց պատերազմի, առանց բակի, առանց մարդոց անցուցիկը մէկուկէտ տարին՝ իւրաքանչիւրս միս միսակ, «Ջորոնա» ժաիրին պատճառով:

Ելեկտրականութիւն ալ կար, ջուր ալ, համացանց ալ, «Նեֆֆիլիս» ալ, կապի եւ հաղորդակցութեան առցանց կարելիութիւններ ալ, սակայն բոլորս ալ տխուր ենք, բոլորիս սրտերուն մէջ թախիժ, ներութիւն, կարօտ, տագնապ եւ հոգեկան իրարանցում կա: Բակերը փոխարինուած են «Չուսմ»-երով:

Բայց, ըստ երեւոյթին, ժամանակը փոխուած է: Աւելի ճիշդ, ըստ երեւոյթին, ֆիզիքական, ոգեղէն կապը աւելի տաքուկ է ու իրական: Աւելի անմիջական եւ մայրուն:

Յ. ԼՍՏՅԵԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ԵՌԱԳՈՅՆ ԴՐՕՇԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ` ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 103-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

ՆՈՐ ԶՈՐԱ



Հայաստանի Ա. Հանրապետության հիմնադրության 103-ամեակին առիթով Սպահանի մեջ տեղի ունեցավ դրօշակի արարողություն եւ Հանրապետական մաղթանք:

Սպահանի հայոց թեմի առաջնորդ Սիփան եպս. Զէյեմեան իր պատգամին մէջ յայտնեց, որ 1918-ին Հայաստանի անկախութեան կերտումը հեգասահ պայմաններու մէջ տեղի չէ ունեցած, անելցնելով, որ իմաստուն ղեկավարութեան շնորհիւ՝ սխրագործ հայ ժողովուրդը ոչ միայն կրցած է վերածնիլ եւ վերականգնել, այլեւ՝ հիմնել Հայաստանի Ա. Հանրապետությունը: Սրբազանը նշելով, որ այսօր դարձեալ կը կրկնուի պատմութիւնը, հաստատեց, թէ իւրաքանչիւր անձ իր ներաշխարհին մէջ ունի՝ հաւատք, յոյս, համագգային իսկական գաղափարներ ու արժեքներ, յարգանք, փոխանութիւն եւ վճռակամութիւն, եւ կոչ ուղղեց, որ բոլորը պատմութենէն դասեր քաղելով՝ աշխատին իրավիճակը բարեփոխել ու փրկել հայրենիքը:

Ազգային մարմիններուն անունով ելոյթ ունեցաւ Թեմական խորհուրդի անդամ Սոնիկ Բաղումեանը, որ անդրադառնալով Հայաստանի Ա. Հանրապետության լուրջ ձեռքբերումներուն, ինչպէս՝ հայկական բանակի եւ հայկական դրամի ստեղծում, Երեւանի մէջ առաջին համալսարանի հիմնադրում, խորհրդարանական ընտրութիւններու իրականացում եւ երկամեայ ժամանակահատուածին մէջ Հայաստանի Հանրապետության հողային տարածքի զգալի աճ, հաստատեց, որ ներկայիս մեր հայրենիքը կրկին պեկոծւած է Նոյն սպառնալիքով, անելցնելով, որ թրքական եւ մեծապետական ծրագիրները մեզ հարւածի տակ առած են թէ՛ ներքին ճակատին վրայ՝ ազգային շահը, ազգի եւ հայրենիքի անվտանգութիւնը խաթարող, ազգային բոլոր արժեքները կասկածի ենթարկող, օտարածին ուժերու եւ հոսանքներու հովանաւորելով, թէ՛ արտաքին ճակատին վրայ՝ ռազմական ու քաղաքական հսկայ արշաւով: Ան հաստատեց, որ Սպահանի հայոց թեմը կառուցած մնալով հայրենիքի գորակցելու իր յանձնառուութեան, հայոց պետականութեան, հողային ամբողջականութեան, սահմաններու անխախտելիութեան նպաստող բոլոր գործողութիւններուն օժանդակելու եւ Հայաստանի ու Արցախի ժողովուրդի կրած վերքերու ամոքման նպաստելու ուղղութեամբ, յատկապէս կը շարունակէ Նոր թափ տալ համայնքային կեանքէն ներս՝ հայ սերունդներու մէջ հոգեւոր հաւատամքի, մշակութիւնի ու հայրենասիրութեան ոգիի դաստիարակութեան եւ տարածման աշխատանքներուն:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱԿԱՆԳՆԵՐ



30 մայիսին Եւսիկոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ Արեւմտեան Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ եպս. Տոնոյեան մատուցեց ս. պատարագ, որուն ընթացքին կատարուեցաւ Նաեւ Հանրապետական մաղթանք եւ եռագոյն դրօշի օրհնութիւն:

Սրբազանը իր քարոզին մէջ վեր առաւ 28 մայիս 1918-ի յաղթական ռզին՝ շեշտելով, որ հակառակ մեր ազգի կեանքէն ներս զանազան փորձութիւններու ներկայութեան, Աստուած ճամբայ ցոյց տուաւ մեր ժողովուրդին, որպէսզի ոտքի կանգնի եւ քալէ դէպի առաջ ու տեսնէ ազատ, անկախ իր հայրենիքը՝ Հայաստանը, որ ամբողջ դարեր դրացի պետութիւններու թշնամական յարձակումներուն ենթակայ եղած է, բայց մեր ժողովուրդը մնայուն կերպով իր արեան գնով պաշտպանած է իր հողը, որուն համար զոհուած են մեծ թիւով հայորդիներ, որոնց Նահատակուած կեանքին շնորհիւ այսօր մենք ունինք Հայաստան անուն հայրենիք սրբութիւնը:

Իր խօսքին մէջ սրբազան հայրը Նաեւ ոգեկոչեց յիշատակը մայիսեան յաղթանակի կերտիչ, ղեկավար Արամ Սանուկեանի, որ համայն հայութիւնը ոտքի հանեց ընդդէմ թրքական բանակներու եւ հիմը դրաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան: Ունեցանք ազատ, անկախ Հայաստան, ունեցանք եռագոյն դրօշ, որ ոչ միայն ծածանեցաւ ձողերու վրայ, այլեւ իւրաքանչիւր մեր մարդու եւ ընտանիքի, ընկերութիւններու ու հիւրերին ներքին մէջ եւ յատկապէս՝ սփիւռքեան կեանքէն ներս:

Շարունակելով իր քարոզը՝ առաջնորդը անդրադարձաւ Նաեւ արցախեան վերջին պատերազմին եւ նշեց, որ թեւ բազմահազար հայորդիներ իրենց արիւնը հեղեցին Արցախի եւ Հայաստանի հողերուն վրայ, սակայն անհաւասար այս կռիւը աւարտեցաւ

հայկական կողմի պարտութեամբ եւ հողային կորուստով: Ան յորդորեց ներկաները՝ համախմբուելու սուրբ դրօշի օրհնութեան ներքեւ, որպէսզի կարենանք մեր ուժերը միացնել ու լարել զանոնք մեր թըշնամիին դէմ եւ ազատագրել ազերիաթրքական կողմին խլած հողերը, պաշտպանել հայ ժողովուրդը եւ որպէս հայ մարդ, ազգ ու հայրենիք՝ վերստին տերը կանգնիլ մեր դարաւոր սրբութիւններուն:

ՅՈՒՆԱՍՏԱՆ



30 մայիսին Յունաստանի թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, յընթաց սուրբ պատարագին, կատարուեցաւ Հանրապետական մաղթանք, եռագոյն դրօշի օրհնութիւն, Նաեւ հոգեհանգստեան պաշտօն՝ 1918-ի մայիսեան հերոսամարտերու ընթացքին զոհուած հայոց բանակի քաջամարտիկներու հոգիներուն համար:

Աթենքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ մէջ սուրբ պատարագը մատուցեց Յունաստանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ արք. Խաչերեան:

Սրբազանը իր քարոզին մէջ հաստատեց, որ Հայաստանի վերանկախացումը, հայրենի եռագոյն դրօշն ու օրհներգը եւ պետականութիւնը հայ ժողովուրդին տուին ինքնութիւն, պատկանելիութիւն՝ աշխարհի ազգերու կարգին: Ոչ միայն հայրենի ժողովուրդը ազգային զարթոնք եւ ազգային գիտակցութեան բիրտեղացում ապրեցաւ, այլեւ սփիւռքի հայութիւնը իր ապրած օտար միջավայրին մէջ, համայնքային կարգավիճակի տարտամ զաղափարին փոխարէն, ստացաւ պետականութիւն ունեցող երկրի մը յստակ ազգային պատկանելիութիւն:

Անդրադառնալով վերանկախացման տօսին առթիւ եկեղեցիներէն ներս հանրապետական աղօթքին՝ սրբազանը շեշտեց, որ քրիստոնեական մեր հաւատքի դաստիարակութիւնը մեզի կը թելադրէ պահել եւ պաշտել սրբութիւնները, անելցնելով, որ Աստուած երկնային սրբութիւն է, հայրենիքը երկրային սրբութիւն է: Հաւատք ունենալ եւ այդ հաւատքի արտայայտութիւն եղող գործեր չունենալը անիմաստ է: Հետեւաբար հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը թէ միայն զգալով ըլլալ, թերի է, անոր պետք է միանալ հայրենիքի պահպանման, զարգացման համար մատուցուած արդիւնաբեր գործեր եւ իրագործումներ:

Ան շեշտեց, որ 28 մայիս 1918-ին հայութիւնը եղաւ ազգ ու պետութիւն, աշխարհի քարտէսին վրայ ունեցաւ իրաւացի հող եւ հայրենիք ու ազգերու խճանկարին մէջ ունեցաւ իրեն յատուկ եռագոյն դրօշը եւ համայն հայութեան դարձեալ պարգեւեց հայ ըլլալու ազգային հպարտութիւնը, շեշտելով, որ ներկայիս այս տօնը սրբային հայ ժողովուրդը կը գտնէ մնայլ եւ մտահոգիչ պայմաններու մէջ: Անցնող տարուան սեպտեմբերին Արցախի պատերազմին անկառուական եւ նուաստացուցիչ պատերազմի հետեւանքները շարունակեցաւ եւ հայ ժողովուրդը, յատկապէս՝ սփիւռքահայութիւնը, որ վերանկախացման 30 տարիներու ընթացքին միշտ լիաբուն ընդառաջեց Հայաստանի եւ Արցախի զօրակցութեան բոլոր կոչերուն ու մասնաւոր վերջին 44-օրեայ պատերազմին: Զաղաքական մակարդակի վրայ շարունակուող անկայուն եւ մտահոգիչ կացութիւնը, որուն ժխտական հետեւանքները կը վտանգեն Նոյնիքն Հայաստանի կայունութիւնը եւ ապագայի գոյատեւումը, մենք՝ իրեն սփիւռքի հայութիւն, Հայաստանի ներքին քաղաքական կեանքին զարգացումներուն անմիջականօրէն մասնակից չըլլալով հանդերձ, Հայաստանի հանդէպ մեր ցուցաբերած պարտականութեանց դիմաց իրաւունքը ունինք ընտրական գործընթացին հետ կապուած մեր լոգունքը, կարգախօսը բարձրածայնել՝ ըսելով, որ հայրենասեր եւ հայրենաշէն ղեկավարներ կը փնտռուին, որովհետեւ Հայաստանի գոյութիւնը, անսասանութիւնը կենսական կարեւորութիւն ունին սփիւռքահայութեան սերունդներուն համար, որպէսզի օտար հովերու եւ հոսանքներու ենթակայ պայմաններու մէջ կարենանք պահել մեր ինքնութեան հիւսիսը ցոյց տուող կողմնացոյցը:

Սրբազանը շեշտեց, որ ազգային տօները անցեալի յուշերու եւ դէպքերու յիշատակում չէ, այլ՝ պատմակերտ կարեւոր իրադարձութեանց ազգային յորդորն ու պատգամը կենդանի ապրում, առօրեայ զգացում պահել իւրաքանչիւր սերունդի կեանքին մէջ, անելցնելով, որ մայիս 28-ն, մեզ կը գօտեպնդէ, որպէսզի յարատեւենք ազգային մեր ինքնութեան եւ ժառանգութեան տեր տիրական մնալու, ինչպէս Նաեւ՝ յանձնառու մնալու մեր ազգային պարտականութեանց:

ԹԵՅՐԱՆ

30 մայիսին Թեհրանի հայոց թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Հանրապետական մաղթանք, եռագոյն դրօշի օրհնութիւն, Նաեւ հոգեհանգստեան արարողութիւն՝ Ղարաբաղի խեղճ, Բաշ Ապարանի, Սարդարապատի եւ այլ վայրերու մէջ տեղի ունեցած ճակատամարտերուն հայ Նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար:

Թեհրանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցւոյ

Շար.ը՝ էջ 6

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՀՅԴ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԵՐՈՒ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ՝ ԱԶՐԴԵՅՃԱՆԻ ԴԵՍԱԳՆՈՒԹԵԱՆ ԱՌՁԵՒ



Կազմակերպութեամբ ՀՀԴ Յունաստանի երիտասարդական միութեան, 26 մայիսին Աթենքի մէջ Ազրպէյճանի դեսպանութեան առջեւ տեղի ունեցաւ բողոքի հաւաք մը՝ դատապարտելու համար Ազրպէյճանի սադրիչ գործողութիւնները:

ՀՀԴ երիտասարդական միութեան Կեդրոնական վարչութեան անդամները յաջորդաբար յոյն հանրային կարծիքին առջեւ ներկայացուցին Սիւնիքի մէջ Ազրպէյճանի ներխուժման փորձերը եւ անոր շարունակական յարձակողապաշտութիւնը Արցախի ու Հայաստանի ժողովուրդին դէմ, խստօրէն դատապարտելով Հայաստանի սահմաններէն ներս Ազրպէյճանի ռազմական ուժերու ներխուժումը եւ պահանջելով հայ ռազմագերիներու ազատ արձակումը: Անոնք անդրադարձան Նաեւ՝

Ազրպէյճանի ոճրագործութիւններուն, Արցախի ու Հայաստանի դէմ շարունակուող բռնարարներուն, միջազգային օրէնքներու կոպիտ խախտումներուն եւ հայութեան դէմ անվերջ սպառնալիքներուն:

Անդրադարձ կատարուեցաւ Նաեւ օրեր առաջ Եւրոպական խորհրդարանի լիազույմար Նիստին որդեգրուած բանաձեւին եւ անկէ բխող ազդարարութիւններուն, որ Եւրոպական խորհրդարանը ուղղած է Ազրպէյճանին:

Ցոյցի ամբողջ տեւողութեան ուժական ոճով եւ պահանջատիրական լուրջութեամբ պահանջուեցաւ հայ գերիներու ազատ արձակումը, որ անյապաղ գործադրելու պարտաւոր է Ազրպէյճանը:

ԹԻՖԼԻՍ

ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Վ Ե Ր Զ Ե Ր Ս

Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի հայ գործիչներու պալատէն մէջ տեղի ունեցաւ ՀՍԸՄ Թիֆլիսի սկաւտներու երդման արարողութիւնը: ՀՍԸՄ աշխարհագրիւմ մեծ ընտանիքը համալրուեցաւ 50 նոր սկաւտներով:


Արարողութեանը մասնակցեցին ՀՍԸՄ-ական սկաւտները երթով քաղցին դէպի Ս. Գեորգ եկեղեցի՝ նշելու համար Սայաթ Նովայի տօնը՝ Վարդատօնը, վարդեր գետնէն դուրս բերելով մեծ աշունդի շիրիմին վրայ եւ յարգելով անոր յիշատակը:



ԱՊՐԻՍ ԵՊԻՍԿՈՍ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԵՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԻՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ ՄԶԵՐ ՍԱՀԱԿԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Արաբական Միացեալ Եմիրութիւններու «Անուար Գարգաշ»-ի անուան դիւանագիտական դպրոցը իրատարակեց «Հիմնաստան-Եւրասիա» քաղաքական եւ ռազմավարական խորհուրդի ղեկավար, Աւստրիոյ Խաղաղութեան հիմնարկի խորհրդական-ներու խորհուրդի անդամ, Հոնկ Զոնկի համալսարանի «Ասիա կլոպալ» հիմնարկի անդամ Միեր Սահակեանի աշխատութիւնը, որ կը վերլուծէ փոփոխութիւն կողմ աշխարհակարգի պայմաններուն մէջ Արեւմուտքի (ԱՄՆ, ԵՄ) եւ Արեւելքի (Չինաստան եւ Ռուսիա) միջեւ ընթացող պայքարը Կեդրոնական Ասիոյ համար: Հեղինակը ներկայացուցած է Թուրքիոյ, Իրանի, Հնդկաստանի, Շոնցի համագործակցութեան խորհուրդի երկիրներուն վարած քաղաքականութիւնը տարածաշրջանին մէջ: Սահակեան անդրադարձած է Նաեւ արցախեան պատերազմին Թուրքիոյ մասնակցութեան եւ անոր ունեցած ազդեցութեան՝ Կեդրոնական Ասիոյ եւ Չինաստանի Սինծիանի անվտանգութեան վրայ:



ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐԱԼ ՄԻՍԵԱՆ

ԱՐՁԱՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՂԿԱՎԱՃԱՌ ԾԵՐՈՒՆԻՆ՝ ԿԱՐԱՊԱԼԱ

Երեւանցիներուն կողմէ շատ սիրուած արձան է Ծաղկավաճառ ծերունիին արձանը, որ քանի մը անգամ տեղափոխուած է զանազան պատճառներով:

Կարապալայի արձանը տեղադրուած է 1995-ին, Աթոլեան փողոցի այն պատուածէն, ուր այժմ Հիւսիսային պողոտան է: Շուտով պողոտայի շինարարութեան հետ կապուած հարցով արձանը քանի մը անգամ տեղափոխուած է: Սկիզբը ան տեղադրուեցաւ դիմացի մայրթին, այնուհետեւ՝ Տրեան փողոցին վրայ, իսկ այժմ կը գտնուի սկզբնական վայրէն ոչ շատ հեռու՝ Նախկին «Մանկական աշխարհ» հանրախանութի պատին տակ:

Նշենք, որ քանդակագործ Լեւոն Թոքմաջեան հեղինակն է՝ Նաեւ Մարտիրոս Սարեանի յուշարձանին (Երեւան), Տիգրան Մեծի յուշարձանին (Երեւան), «Տազնապ» խմբաքանդակին (Էջմիածին), եւ այլն...

«Ծաղիկ ծափող կարապալան Յայտնի մարդ է Երեւանը, Ամէնքի հետ ըէ՛ք է անում Ծաղիկ ծափող կարապալան»:

ՀԱՍՏ ՍԱՀԵԱՆ



5 ԶԱՅԼԵՐ՝ ՀՈԳԵՊԷՍ ԱՌՈՂՋ ԵՐԵՒԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոգեպէս առողջ երեխայ մեծցնել՝ չի նշանակեր, որ երեխան պետք չէ լայ, պետք չէ տխրի կամ ծախողի: Ընդհակառակը, ասոնք բանալիներ են, որոնց միջոցով երեխան պիտի բանայ իր կեանքի յաջողութեան դռները:

Ստորեւ կը ներկայացնենք 5 քայլեր, որոնք կ'օգնեն հոգեպէս առողջ երեխայ դաստիարակելու համար:

1.- ԸՆԴՈՒՆԻԼ ԶԱՆՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցը ստացած վատ նիշ մը, մրցումի մը ընթացքին կրած պարտութիւն մը չեն նշանակեր, որ ձեր երեխան նըւազ լաւ է, քան՝ միւս երեխաները: Զախողութիւնները մեր կեանքի ուղեկիցներն են, ճիշդ այնպէս, ինչպէս յաջողութիւնները: Զեր երեխային սորվեցուցէք այս բանաձեւը:

2.- ԶԵՐԲԱԶԱՏԻԼ ԱՆՏԵՂԻ ՄԵՐՔԻ ԶԱՅՈՒՄԷ

Օգնեցէք ձեր երեխային, որ ազատի անտեղի մեղքի զգացումներէ: «Դուն իմ ընկերս ես, տո՛ւր տետրակդ, որպէսզի ընդօրինակեմ տնային պարտականութիւնը», «Եթէ զիս կը սիրես, թոյլ տուր, որ ես շահիմ վազքի մրցումը...»: Այս արտայայտութիւնները պետք չէ, որ դեր խաղան երեխային կեանքին մէջ: Զեր երեխաներուն սորվեցուցէք, որ որոշումներ կայացնելու ժամանակ պետք չէ առաջնորդուիլ մեղքի զգացումով:

3.- ԵՍԱԿԵԴՐՈՆ ԶՐԱՌՆԱԼ

Զեր երեխային սորվեցուցէք առաջնորդուիլ հետեւեալ բանաձեւով՝ «Ես ի՞նչ կրնամ ընել աշխարհին, իմ երկրիս, իմ սիրելիներուս հա-



մար», այլ ոչ թե՛ «Ի՞նչ կրնան ընել բոլորը ինծի համար»:

4.- ԶԽՈՒՄԱՓԻԼ ԴԺՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեխաներուն մշտապէս պաշտպանելը չ'օգնէր անոնց, որ դառնան ինքնուրոյն եւ ինքնաբաւ: Զեր երեխային սորվեցուցէք, որ վախեն եւ դժուարութիւններէն ձերբազատելու լաւագոյն միջոցը զանոնք դիմագրաւելն է: Այսպէս, դուք կը մեծցնէք համարձակ մարդ, պատրաստ՝ դիմակալելու որեւէ դժուարութիւն:

5.- ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՐՈՐՈՒԹՅՈՒՆ

Զեր երեխային թոյլ տուէք ինքնուրոյն որոշումներ կայացնել ամենապարզ հարցերուն պարագային՝ ի՞նչ հագուիլ այսօր, ի՞նչ ուտել ընթրիքին, ո՞ր երթալ զբօսնելու համար, ո՞ր մարզածէն ընտրել, եւ այլն: Թող ձեր երեխան փոքր տարիքէն վարժուի կարծիք յայտնելու եւ ինքնուրոյն որոշումներ կայացնելուն...»:

ԻՆՉՊԷ՞Ս ԶԵՐԲԱԶԱՏԻԼ ՏԱՆ ՄԵՋ ԱՌԿԱՅ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐՈՒ ՀՈՏԵՐԵՆ

Նոյնիսկ տունը մաքրելէ եւ օդափոխելէ ետք, յաճախ կարգ մը կերակուրներու հոտերը երկար ժամեր չեն անհետանար: Այս սիւնակով կը ներկայացնենք 2 դիւրին եւ աժան միջոց՝ կերակուրներու տհաճ հոտերը կլանելու համար:

Նախ յիշեցնենք, որ տան պատուհանները բաց պէտք է պահել կերակուր եփելէ առաջ, բայց մանաւանդ ետքը՝ գոլորշիներէն եւ հոտերէն ձերբազատելու համար. իսկ կերակուր պատրաստելու ժամանակ պէտք է փակել խոհանոցին դուռը՝ տան մնացեալ սենեակները կերակուրի անբաղձալի հոտերէն պաշտպանելու համար:

ԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑ


Մաքուր, փոքրիկ կաթսայի մը մէջ ջուր լեցնել, աւելցնել Նարինջի կամ կիտրոնի կեղեւ, մէկ-երկու մեխակի գամ, կասիայի փայտիկ մը եւ կաթսային տակը վառել, մինչեւ որ ջուրը եռալու սկսի: Անուշաբոյր գոլորշին շուտով կը կլանէ անբաղձալի հոտերուն մեծ մասը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԻՋՈՑ

Այրած կերակուրներու, ձուկի կամ տապկոցի անախորժ հոտերը չեզոքացնելու լաւագոյն միջոցներէն մէկը քացախն է:

Փոքրիկ կաթսայի մը մէջ զաւաթ մը ճերմակ քացախ եռացնել՝ մէջը մէկ-երկու կիտրոնի շերտ աւելցնելով: Շուտով քացախի գոլորշին կը տարածուի ամենուրեք եւ կը կլանէ ուտելիքներու անբաղձալի հոտերը: Տունը օդափոխելէ կէս ժամ ետք պիտի քցախին հոտն ալ չեզոքացած կ'ըլլայ: Կարելի է պաղած քացախը շիշի մէջ լեցնել եւ տան մաքրութեան օգտագործել՝

- Խոհանոցի աշխատանքի սեղանը մաքրելու եւ հականեխելու համար,
- Բաղնիքին լուացարանն ու լոգարանը մաքրելու համար,
- Տան ապակիներն ու հայելիները մաքրելու համար,
- Տան փափուկ կահոյքը հականեխելու համար,
- Մանրալիքը մաքրելու եւ հականեխելու համար:



ՇԱԲԹՈՒՄԱՆ ՄՏԱԾՈՒՄԸ

Օ՛ր, իմ ժողովուրդ, դու հաւաքական Նարեկացի, գուցէ արդա՛ր էր, որ դո՛ւ, հէնց դու եւ միա՛յն դու պատասխան տայիր աշխարհի մեծ ու փոքր մեղքերի համար, եւ հէնց քո ձայնը չլսէր աշխարհը, թէպէտ դու աղաղակել ես հէնց նրա բառերով:

Օ՛ր, իմ ժողովուրդ, դու հանճարեղ ծախողակ: Պատմութիւն կոչուող դպրոցի դու միամիտ աշակերտ: Որքան ենք մեր ծախողումների պատճառը դրսում որոնել, երբ պատճառը յաճախ միայն մենք ենք եղել, միայն մենք, մեր բաժան-բաժանութիւնը, անխելք-հերոսութիւնը, խելօք-եսամոլութիւնը... Եւ յաճախ ինչպէս ենք ատել ինքներս մեզ...

ՎԱՐԴԱՅ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԲՈՅՍԵՐՈՒ ԽՆԱՍԷ

ԼՈՒՅԿԻՆ՝ ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ԱԺԱՆ ՄԻՋՈՑ



Եթէ նկատեք, որ ձեր տան բոյսերէն ոմանք կը թառամին ու կը մեռնին, հակառակ ձեր ցուցաբերած մեծ ուշադրութեան եւ խնամքին, շատ հաւանաբար պատճառը թաղարին մէջ բոյն դրած վնասակար միջատներն են... Դուք միշտ չէ, որ կրնաք անզէն աչքով տեսնել այդ վնասակար միջատները, բայց կրնաք անոնց դէմ պայքարիլ շատ պարզ միջոցով մը:

Բայց նախ եկէք հասկնանք, թէ ինչո՞ւ այս միջատները կը յայտնուին ձեր թաղարներուն մէջ: Հիմնական պատճառները հետեւեալներն են.

- Զափէն աւելի ջրելը
- Անորակ հողը
- Վատ որակի պարարտացուցիչը:

Իսկ լուծումը շատ պարզ է. թաղարին մեծութեան համաձայն առէք 2-էն 4 կամ 5-10 ոչ վառած լուցիկ եւ զանոնք գլխիկվար մխրճեցէք հողին մէջ՝ թաղարի եզերքէն քանի մը սմ հեռու: Շարունակեցէք նոյն ձեւով խնամել ձեր բոյսը:

Լուցիկները մէկ շաբաթ ձգեցէք հողին մէջ, ապա ստուգեցէք՝ արդեօք ծծումբը լուծուե՞ր է: Եթէ այո՛, հանեցէք լուցիկները եւ զանոնք փոխարինեցէք նորերով: Այս գործողութիւնը կատարեցէք 3 շաբթուան վրայ:

Ֆոսֆորը եւ ծծումբը կ'օգնեն, որ ձեր բոյսը առողջ աճի, եւ վնասակար միջատները չքանան:

ԽՈՉԱԳԻՐ

ՓԵԹԱԿԻ ՏԵՍԵՐՈՎ ՀԱՅՏԻԿՆԵՐ



Բաղադրիչներ

- 5 գաւաթ ալիւր
- 2 գաւաթէն քիչ մը պակաս գաղջ ջուր
- Կէս գաւաթ ձեթ
- 1 թէյի դգալ աղ
- 6 ապուրի դգալ փոշի կաթ
- 1 ապուրի դգալ պէյքիկ փառտորը
- 2 ապուրի դգալ թթխմոր
- 1 ապուրի դգալ շաքար
- Քիչ մը մեղր՝ երեսը ծեփելու համար

Պատրաստութիւն

Ամանի մը մէջ խառնել ջուրը, կաթը, թթխմորն ու շաքարը: Աւելցնել ձեթը եւ կաթը, շաղել՝ քիչ-քիչ աւելցնելով ալիւրն ու պէյքիկ փառտորը (նախընտրաբար՝ նախապէս մաղէ անցած):

Լաւ շաղելէ ետք միջակ չափի գունդերու վերածել եւ ձգել, որպէսզի առնուազն կէս ժամ հանգչին:

Կէս ժամ ետք ափսելի մը յատակը մոմ թուղթով ծածկել եւ արդին իսկ ուռած գնդիկները քով-քովի շարել եւ նախապէս տաքցուած փուռի մէջ եփել 180 ցերմաստիճանով:

Փուռէն հանելէ ետք հացիկները հեղուկ մեղրով ծեփել եւ զարդարել սեւագնդիկով եւ շուշմայով:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՄԱՐԻՍԱԳԱԼԵԱՆ

ԸՆՆԱԴԱՏԵ՛Լ. ԻՆՉՈ՞Ւ...

Շարունակում 3-րդ էջին

իրաւամբ: Դժբախտ իրականութիւնը կը յուշէ, որ իսկապէս մեծ տոկոս կը կազմեն անոնք, որոնք մնալուն կերպով կը դժգոհին՝ առանց սակայն իրենց անձնական պատկերացումներուն գործնականացման մասին մտածելու:

Նման մարդոց մօտ քննադատութիւնը շատ յաճախ կը վերածուի ինքնապաշտպանութեան կեղծ միջոցի, մնայուն քննադատութիւններու պիտակին տակ, իրենց թերութիւնները կամ աւելի ճիշդ՝ իրենց ծուլութիւնները ծածկելու համար:

Իրաւ քննադատութիւնը ունի երկու ձեւի արտայայտութիւն. առաջինը ժողովրդային ընթացիկ քննադատութիւնն է, որ փափաքները իրականութեան հետ կը շփոթէ եւ կը պահանջէ իր բոլոր ակնկալութիւններուն գոհացումը: Երկրորդը գիտակից մօտեցումով առողջ քննադատութիւնն է, որ յանձնառու մարդու խտապահանջութեամբ, տեղի՜ն, համապատասխան հիմնաւորումներով կեցուածք կը ճշդէ սխալ գործելակերպերու եւ մտայնութիւններու դէմ, կը պայքարի ու կը քանայ ամեն գնով իրականացնել իր սեփական պատկերացումները:

Առողջ քննադատութիւն կատարողներ իրենց քըննադատութիւնները կ'ուղղեն մարդոց կեցուածքներուն եւ ոչ թէ անոնց անձերուն դէմ: Ըննադատութիւններ իրենց ուժն ու ազդեցութիւնը կը կորսնցնեն, երբ կ'անձնականացուին:

Առողջ մօտեցումով քննադատողներ կը յարգեն քաղաքավարութեան տարրական պայմանները եւ իրենց բողոքին ու դժգոհութեան չեն միացներ անարգանքը եւ վիրաւորանքը: «Չայիոյանքը փաստի սով է», պիտի ըսեր մեր անմահ երգիծաբանը՝ Դարոնեան:

Յաճախ կը պատահի, որ մարդիկ կը քննադատեն՝ առանց գիտնալու, թէ ի՛նչ եւ ի՛նչո՛ւ կը քննադատեն: Յաճախ նաեւ անոնք փաստեր ու տուեալներ չեն ունենար իրենց քննադատութիւնները հիմնաւորելու եւ համոզիչ դարձնելու համար: Տակաւին, կան նաեւ այնպիսիներ, որոնք «յօնք շինելու փոխարէն աչք կը հանեն»: Սխալ մը ուղղելու համար աւելի մեծ սխալ կը գործեն:

Ամեն մարդ արժանապատուութիւն ունի: Մարդիկ իրենց քննադատութիւնները կատարելու ժամանակ իրաւունք չունին խօսելու կամ գրելու այնպիսի գեեհիկ ոճով մը, որ դիմացինը վարկաբեկեն, անոր արժանապատուութիւնը վիրաւորեն, որովհետեւ նման քայլով մը անոնք նախ եւ առաջ իրենց գիրքը վարկաբեկած կ'ըլլան, իրենց անմակարդակ եւ անարգալիր ըլլալը մատնած կ'ըլլան:

Մտն'ք ընկերային ցանցեր եւ որքա՛ն աժան բամբասանք, գրապարտութիւն եւ ըսի-ըսաւ պիտի գտնեք այնտեղ՝ հասարակ ոճով եւ թունաւոր արտայայտութիւններով: Այսպէս կարելի չէ քննադատել գիրար: Այս ձեւով կարելի չէ սրբագրել իրարու սխալներ:


Բոլորս ալ գիտեցը, որ անսխալական մարդ չկայ: Գործող մարդը անպայման կը սխալի: Չի սխալիր միայն չգործող մարդը, որուն սխալն ալ... չգործելն է: Յետեւաբար, քննադատութիւններ եւ քննադատողներ միշտ պիտի ըլլան: Սակայն, զգո՛ւշ, քննադատելու համար մարդիկ պարտին ունենալ երկու բան՝ բարոյական իրաւունք եւ քաջութիւն:

Բարոյական իրաւունքը կու գայ քննադատելի նիւթի մը հանդէպ քննադատող մարդու ծանօթութենէ, իմացութենէ եւ մասնագիտութեան բերումով ունեցած որոշ փորձառութենէ: Երբ մարդ գիտէ ըսածը, կրնայ այդ մասին կարծիք տալ ուրիշներու: Այլապէս, անոր կարծիքը շատախօսութեան սահմաններէն անդին չ'անցնիր: Օրինակ, ելեկտրագետը ի՞նչ հիմամբ կրնայ չհասկիլ պատմագետի մը գործը, կամ՝ հակառակը, պատմաբան մը ինչպէ՛ս կրնայ թերագնահատել ելեկտրագետի մը աշխատանքը: Ի վերջոյ, գործ մը քննադատելու բարոյական իրաւունքը ունին գործէն հասկցողները միայն:

Քաջութիւնը այս պարագային փնտռում ալ յատկութիւն մըն է: Որեւէ երեւոյթ քննադատող մարդը քաջութիւնը պէտք է ունենայ ինքնավստահ կերպով նայելու դիմացինին աչքերուն եւ ըստ այնմ ըսելիքը ըսելու անոր: Յամակարգիչներու պատառններուն ետեւ պահուլտած, անծանօթ կամ շինծու անուններով ուրիշները քննադատելը վարպետութիւն չէ: Քաջութիւն եւ պատասխանատուութիւն կը պահանջէ ներկայանալ տուեալ պատասխանատուի մը դիմաց եւ համարձակօրէն ու տրամաբանականօրէն բանավիճիլ եւ քննադատել գայն: Այս քաջութիւնը ունեցողներուն պիտի ըսեիք՝ «Պաւս»-ը, իսկ չունեցողներուն պիտի յիշեցնեիք, որ «լռութիւնը ոսկի է»:

Յետեւաբար հանրային աւելի առողջ կեանքի մը համար ազատ պէտք է ըլլալ ամեն առիթի ու ամեն ժամանակ արտայայտելու մեր կարծիքներն ու քննադատութիւնները, պայմանաւ որ անոնք ըլլան անկեղծ, անաչառ եւ առողջ քննադատութիւններ, քաղաքակրթութեան ընդունուած սահմաններով:

Չէ՛ որ մենք քաղաքակրթուած ժողովուրդ ենք...



«ԱԶԴԱԿ»-Ը՝ ՍՓԻՒՌՔԻ...

Շարունակում 3-րդ էջին

(յաղթող), «Ալիք»-ը եւ «Նոյեան տապան»-ը: Յատուկ մրցանակաբաշխութեան ընթացքին «Ազդակ»-ի մրցանակը ստանձնեց «Ազդակ»-ի Երեւանի աշխատակից, լուսանկարիչ Գաբրիէլ Փանոսեան: Ան «Ազդակ»-ին անունով շնորհակալութիւն յայտնեց հայկական «Փի. Ար.» մրցանակաբաշխութեան պատասխանատուներուն եւ դատական կազմին՝ առաջին պարգեւի տնօրինումով «Ազդակ»-ին գործունեութիւնը բարձր գնահատած ըլլալուն համար: Յիշենք, որ «Ազդակ» վերջին տարիներուն մնայուն դիրք գրաւած է առաջին եռեակին մէջ:

Հայկական «Փի. Ար.» մրցանակաբաշխութեան մասնագիտական յանձնաժողովի նախագահն է գերմանացի յայտնի ճառագիր, հաղորդակցութեան մասնագետ, ղոկտոր Վադոնի Բազիլ, անդամներն են՝ Հրաչուհի Պողոսեան (Լոս Անճելըսի Զալի-Ֆորնիա համալսարանի փրոֆեսոր, Նորարարութեան խթանման եւ հետազօտութեան կեդրոնի ղեկավար), Միքո Խանգղեան («GlobalHye & Associates» ընկերութեան հիմնադիր, ամերիկահայ «Փի. Ար»-ի մասնագետ), Ռուզաննա Իսանեան (Մենթ Փթերսպոլիկ արդիւնաբերական արհեստագիտութեան եւ ձեւագծութեան պետական համալսարանի Լրագրութեան եւ լրատուական արհեստագիտական ամպիոնի ղոյցներ), Լիլիթ Շաքարեան (ԵԴՅ Հնկերային աշխատանք եւ ընկերային արհեստագիտութեան ամպիոնի դասախօս), Աշոտ Ալեքսանեան (ԵԴՅ քաղաքական գիտութեան պատմութեան եւ տեսութեան ամպիոնի փրոֆեսոր, Գերմանիոյ Ֆրիտրիխ Շիլլերի անուն Յեւայի համալսարանի քաղաքագիտութեան հիմնարկի հրաւիրուած գիտնական) եւ Աստղիկ Աւետիսեան (Հայկական «Փի. Ար.» միութեան նախագահ, ԵԴՅ-ի Լրագրութեան բաժանումնի ղոյցներ, «Փի. Ար.»

եւ հաղորդակցային արհեստագիտութիւններու) մագիստրոսական ծրագրի ղեկավար):

Այս առիթով արտասանած իր խօսքին մէջ Աստղիկ Աւետիսեան նշեց, որ կազմակերպութեան հետազօտական խումբին համար կարեւոր են որակական եւ քանակական վերլուծումներուն մեթոտաբանութեան կիրարկումը:

«Հայաստանի մէջ վերջին մէկ տարւան ընթացքին հասարակութեան եւ պետական մարմիններուն միջեւ արձանազրուեցաւ փոխամագործակցութեան վստահութեան մակարդակի անկում, ինչ որ ստեղծեց անտարբերութեան մթնոլորտ տեղի ունեցող իրադարձութիւններուն նկատմամբ: Տեղեկատուական հասարակութեան պահանջները այլ են՝ պետական մարմիններուն կողմէ տրամադրուող տեղեկատուութեան մատչելիութիւն եւ մշակուող ու կայացուող որոշումներուն մասնակցութիւն եւ իրապարակայնացում: Հստ մեր ուսումնասիրութիւններուն, խախտած է հասարակութեան ճշմարիտ տեղեկատուութիւն ստանալու իրաւունքը, հաղորդակցութիւնը տեղի ունեցած է ուղղահայեաց, որուն իբրեւ հետեւանք յետադարձ կապի մեքանիզմները կրճատուած են: Ոչ գրագետ հաղորդակցութեան պատճառով, Հայաստանի տարբեր ոլորտներուն մէջ յառաջացած են ճգնաժամային իրավիճակներ, ինչ որ կ'առաջնորդէ թէ՛ ներքին, եւ թէ արտաքին հակամարտութիւններու, որոնց իբրեւ հետեւանք մասնաւորապէս տնտեսութեան, առողջապահութեան, դիւանագիտութեան, կրթութեան, մշակոյթի, ինչպէս նաեւ ռազմական ոլորտներուն մէջ յառաջացած է խոր ճգնաժամ: Ասիկա ունի առարկայական եւ ենթադրական պատճառներ՝ արտաքին եւ ներքին հաղորդակցական խղճնորոտներու Նախապայմաններ», յայտնեց Աստղիկ Աւետիսեան:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ...

Շարունակում 4-րդ էջին

մէջ պատարագին նախագահեց Թեմիանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգիսեան:

Իր քարոզին մէջ սրբազանը ընդգծեց, որ Հանրապետական մաղթանք կատարուեցաւ հայրենիքի ազատութեան ամրապնդման, սահմաններու ապահովութեան եւ ժողովուրդի բարօրութեան ու բարեկեցութեան համար: Ան նշեց, որ ներկայիս մտահոգութիւններ կան եւ անորոշ վիճակ մը ստեղծուած է, ընդգծելով, որ հողը այն թանկագին իրականութիւնն է, որով ժողովուրդները կը ճանչցուին եւ անոնք կը գոյատեւեն այն չափով, որքանով որ հաւատարիմ են իրենց հայրենիքին եւ հայրենական արժեքներուն: Սրբազանը ցաւով յայտնեց, որ վերջին երեք տարիներուն Հայաստանի մէջ տեղի ունեցած իշխանափոխութեամբ, դժբախտաբար, մեր հայրենիքը սկսաւ նահանջել եւ այսօր Հայաստանի քաղաքացին յատկապէս սահմանամերձ շրջաններուն մէջ հանգիստ չէ եւ մտահոգ է, որովհետեւ թշնամին ամեն քալափոխի իր աչքերը յառած է մեր հողերուն, մեր երկրին եւ կը փորձէ մեր ժողովուրդը ստրկացնել, մեր հողերը մեր ձեռքէն խլել, եւ ասիկա մեր արժանապատուութիւնը վիրաւորող իրականութիւնն է, երբ չենք կրնար պաշտպանել մեր հայրենիքը ռիւերիմ թշնամիին դէմ: Սրբազանը յորդորեց ներկաները՝ հաւատարիմ մնալ մեր հողերուն, նաեւ չլուսահատիլ եւ մեր արեան գնով պայքարը շարունակել ի մեր եւ ի պաշտպանութիւն մեր այսօր-ւան եւ վաղուան ամբողջական հայրենիքին:



ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10 11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Առիճաճ, դեմքալ:
2. Կիպրական ջաղաճ - Երաշխեպ:
3. Թել մանելու ձեռնային գործիչ - Արական օտար անուն:
4. Կարիճ - Կնդրական, անստոյգ:
5. Կուսակալութիւն - Թրքական զաւրտիկ սպասարկութիւն:
6. Ուղիւստի ձայն հասնել - Մելը - Ճափոնական դասական թատրոն:
7. Կնիւն - Համադասական շաղկապ:
8. Կոզլի՝ Լիւ Եորքի իկախ արեւելքը:
9. Համադասական շաղկապ - Ծնարիտ:
10. Վշտանայ - Տան կարասիներէ:
11. 1982-ի լուսաւոյն Ֆիլմը - Դրիլից տառեր:

ՈՐԿԱԶՄԱՆՆԵՐ

1. Կանաչ լուբիա - Բորթոս կապած:
2. Զահանայական պաշտօնէ գրկուած:
3. Երուհանի «Աղբիւր» - Ռուսերէն՝ այր:
4. Խոռոչ - Վար - Տառի մը դրացիները:
5. Խաղաթուղթի մեկնոց - Անդամալոյծ - Գլուխը կախ՝ օտար աղբիլ:
6. Դարձեալ - Հոլովակերտ մասնիկ:
7. Կանգնի՛ր - Գուրգենի (Դիադաւաար Մալեան) ձկնալակայրը:
8. Արամանդ - Խօսիլ, զրուցել:
9. Մահմետական - Կանթ, բռնատեղ:
10. Ափրիկեան երկիր - Սարուափ:
11. Չատուածներ - Առատ անձրեւ - Կատուազգի գազան:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

8					9			7
		6	2		5			
	3			6			4	
7						9		
		4	9		6	1		
	5							4
	2			3			5	
	7				2	6		
3			8					2

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գնացանց բաղկացած է իւրացանցիւր 9 թառակուրի հաշուող 9 բաժնիներէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրացանցիւր թառակուրի մէջ թուանշում մը գեւեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրացանցիւր շարք, ուղղահայեաց իւրացանցիւր սիւնակ եւ 9 թառակուրից իւրացանցիւր բաժնի ունենայ չէն 9 թառանշումներ՝ իւրացանցիւր թառանշում միայն մեկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թառանշում մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժնիին մէջ: Այսինքն հաւաք՝ կարգ մը թառանշումներ իրենց ճշգրիտ թառակաւորներուն մէջ գեւեղուած են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒ ԼՈՒԵՈՒՄՆԵՐԸ

ԽԱՉԲԱՆ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10 11
1	4	5	6	7	8	9	10	11		
2	4	5	6	7	8	9	10	11		
3	4	5	6	7	8	9	10	11		
4	4	5	6	7	8	9	10	11		
5	4	5	6	7	8	9	10	11		
6	4	5	6	7	8	9	10	11		
7	4	5	6	7	8	9	10	11		
8	4	5	6	7	8	9	10	11		
9	4	5	6	7	8	9	10	11		
10	4	5	6	7	8	9	10	11		
11	4	5	6	7	8	9	10	11		

ՍՈՒՏՈՔՈՒ										
	1	2	3	4	5	6	7	8	9	10 11
1	4	5	6	7	8	9	10	11		
2	4	5	6	7	8	9	10	11		
3	4	5	6	7	8	9	10	11		
4	4	5	6	7	8	9	10	11		
5	4	5	6	7	8	9	10	11		
6	4	5	6	7	8	9	10	11		
7	4	5	6	7	8	9	10	11		
8	4	5	6	7	8	9	10	11		
9	4	5	6	7	8	9	10	11		
10	4	5	6	7	8	9	10	11		
11	4	5	6	7	8	9	10	11		



ՆՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 եւ 95 MHz

7.00 Զայրեզներ / Բարի լոյս

7.15 Սփիւռեան երգեր

7.30 Բարեւ

8.30 Լուրեր

9.00 Բարեւ

9.30 Բարեւ հարցազրոյց, հիւր՝ Գոհար Պալըքեան (ուղիղ՝ դիմատեսքով)

10.00 Սփիւռեանայ երգիչներու կատարումներ

10.30 Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեսքով)

10.45 Հայրենի սիրուած երգեր

11.00 Յատուկ հարցազրոյց. հիւր՝ Վաչէ Բրուտեան (ուղիղ՝ դիմատեսքով)

11.30 «Երգ երգոց»-ի երգեր

12.00 Ազգային արժեքներ (Արամ Խաչատուրեան)

12.30 Սփիւռեանայ երգիչներու աշուղական կատարումներ

1.00 Ազգային-հայրենասիրական երգեր

1.30 Լուրեր

2.00 Յիշատակելիները (Արցախ-Լեւոն Նորոյեան հերոսներ)

2.05 Յեղափոխական երգեր

3.00 Զըլ ետմ պիտմու.

4.00 Հայրենի խանդավառ երգեր

4.30 Օ. Թի. Վի-ի հայերէն լուրերու ուղղակի սփռում

5.00 «Վանայ Զայն»-ը երեկոյեան

5.05 Երաժշտական երանգներ (Շողիկ Թորոսեանի հետ)

5.30 «Արարատ» լարային հնգեակի խոր ձայնակաւառակի ներկայացում

6.30 Լուրեր

6.50 Ժողովրդային երգեր

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵՏԹՊՈԼ

ՍԱԺԵՍ ԵՒ ՊԵՅՐՈՒԹ ԿԷՏԵՐՈՒ ՄԵԾ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՄԲ ՅԱՐԱՆԱԿՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ



Լիբանանի տողոց պասքեթպոլի ախոյեանութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, երէկ կատարուեցան երկու ճակատումներ։ Սաժես արձանագրեց բաւական տպաւորիչ եւ կէտերու մեծ տարբերութեամբ յաղթանակ մը, երբ 122-71 արդիւնքով (11-32, 41-54, 58-97 եւ 71-122) յաղթական վերադարձաւ Անիպալ Չահլէի դաշտէն։ Յաղթական կազմէն Նետիմ Սուէյտ նշանակեց 32 կետ, մինչ Անիպալէն Զրիսթֆօր Մաալուֆ՝ 33 կետ։ Իսկ Պէյրութ, որ հիւրընկալեց Ալթասը, իր կարգին արձանագրեց մեծ յաղթանակ մը՝ 95-56 արդիւնքով (19-19, 42-29, 72-44 եւ 95-56)։ Պէյրութէն Ժորժ Պէյրութի նշանակեց 24 կետ, իսկ Ալթասէն Ճոյ Չալլում՝ 18 կետ։

ՏԵՄՊԵԼԵ ԿՐՆԱՅ ԶԵՌԱՆԱԼ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԷՆ

Զաթալոնական Պարսելոնային մաս կազմող ֆրանսացի յառաջապահ Ուսման Տեմպելէ, մարզիկներու ամառնային փոխանցման ընթացքին կրնայ հեռանալ իր ակումբէն, այս յայտնեց միջազգային մարզական մամուլը։ Նշուեցաւ, որ Փարիզ Սեն Ժերմեն եւ Եուվելթյուս բաւական մօտէն հետաքրքրուած են Տեմպելով, թէեւ միեւնոյն ժամանակ ալ կը նշուի, որ Պարսելոնա կը փափաքի անոր առաջարկել նոր պայմանագրութիւն մը։ Եթէ Պարսելոնա չկարենայ անոր հետ համաձայնութեան գալ, անոր փոխանցման համար պիտի պահանջէ 50 միլիոն եւրօ։ Անոր գործող պայմանագրութիւնը կ'աւարտի 2022-ին։

ՄԱՌԻԻՑԻՑԻՑ ՍԱՐՐԻ ԳԼԽԱՒՈՐԵՑ ԼԱՑԻՑ ՌՈՍԱՆ

Լացիօ Ռոմայի մամլոյ քարտուղարութիւնը երէկ տեղեկացուց, որ Մարոկոցի Սարրի նշանակուեցաւ ակումբի գլխաւոր մարզիչ։ Իտալացի մասնագետին պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ յունիս 2023։ Սարրի փոխարինեց իտալացի Սիմոնէ Ինցակին, որ գլխաւորեց Իտալիոյ ֆութպոլի ախոյեան Ինթեր Միլանը։ Նշենք, որ Սարրի մարզիչի իր արհեստավարժ ասպարեզին ընթացքին նախապէս գլխաւորած է Նափոլին, Եուվելթյուսը եւ լոստոնեան Չելսին։ Անոր հետ Եուվելթյուս հանդիսացած է Իտալիոյ ախոյեան։

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՊԵՅՃԱՆԻ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Արիւնահեղութիւնը աւարտած է, քիչ մը աւելի ուշ, քան մենք կողմերուն առաջարկած էինք, եւ մեր մեղքը չէ, որ պատերազմը աւելի երկար տւեաժ է, քան կրնար։ Խաղաղութիւնը հաստատուած է աւելի ուշ, քան կրնար։ Մենք ընդամենը միջոցորդներ էինք եւ չէինք կրնար կողմերուն ստիպել, կրնայինք միայն համոզել, որ հետագայ արիւնահեղութիւնը անիմաստ է եւ ծայրայեղ վտանգաւոր այն բանի համար, թէ ետքը մարդիկ այս հողին վրայ ինչպէ՛ս պիտի ապրին», ըսած է ռուսական դիւանագիտութեան պետը։ Ան յայտնած է, որ Հայաստանն ու Ազրայէճանը պէտք է ստրկին իբրեւ լաւ դրացիներ ապրիլ, եւ խորհուրդ տուած է Երեւանէն եւ Պաքուէն հեռոյ յայտարարութիւններուն ուշադրութիւն դարձնելու փոխարէն հասարակ մարդոց կեանքը բարելաւելու ուղղութեամբ ջանքեր գործադրելու։ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը նաեւ նշած է, որ Հայաստանի եւ Ազրայէճանի միջեւ հաղորդակցութեան ուղիներու բացումով «շահագրգռւած են ո՛չ միայն այդ երկու պետութիւնները, այլ նաեւ Ռուսիան, Թուրքիան եւ Իրանը, որոնց կարծիքը նոյնպէս պէտք է բանակցային հոլովոյթին մէջ հաշուի առնուի»։ «Ես կը հասկնամ, որ հիմա շատերը կը խօսին այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կը մնայ չուծուած։ Անոր շուրջ տակաւին պէտք է համաձայնութիւն գոյանայ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն հետ, որոնք ներկայ փուլին, հաւանաբար, պէտք չէ արթնցնեն կարգավիճակի խնդիրը, այլ պշակցին վստահութեան ամրապնդման, մարդասիրական հիմնախնդիրներուն, որպէսզի հայերն ու ազրայէճանցիները դարձեալ սկսին միասին ապրիլ՝ անվտանգութեան եւ տնտեսական բարեկեցութեան պայմաններուն մէջ։ Եւ այդ ժամանակ, ձեզի կը վստահեցնեմ, 2-3 տարի ետք, եթէ մենք նման կեանք հաստատենք, կարգավիճակի բոլոր խնդիրները շատ աւելի դիւրին պիտի լուծուին», ըսած է Լաւրով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՋԱԿԱՆՑ ՖՈՒԹՊՈԼԻ ԶԱՒԱԶԱԿԱՆ ՍԿԱՒ ԻՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ

Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնին մամլոյ քարտուղարութիւնը կը տեղեկացնէ, որ Հայաստանի աղջկանց ֆութպոլի եւ 19 տարեկանէն վար հաւաքականները սկսան նախապատրաստուիլ յառաջիկային տեղի ունենալիք մրցումներուն։ Նշենք, որ աղջկանց հաւաքականի գլխաւոր մարզիչն է Արմէն Սանամեան։ Անոր գլխաւորութեամբ հաւաքականը պիտի կատարէ ֆութպոլի բարեկամական երկու մրցումներ Ղազախստանի դէմ (12 եւ 15 յունիսին)։ Իսկ 19 տարեկանէն վար հաւաքականը իր նախապատրաստութենէն ետք 12 յունիսին պիտի մէկնի Պիեւոռուսիա, ուր երկու մրցում պիտի կատարէ Պիեւոռուսիոյ իր հասակակիցներուն դէմ (13 եւ 15 յունիս)։



ՃԱՏՐԱԿ

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԻ ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայրենի կրանտմաթըր Լեւոն Արոնեան երէկ արձանագրեց իր հինգերորդ յաջորդական հաւասարութիւնը՝ «Սուարըպէթ Չես Զլասիթ» ճատրակի միջազգային մրցաշարքին։ 5-րդ հանգրուանի ծիրին մէջ, Արոնեան, որ մրցեցաւ ֆրանսացի Մաքսիմ Վաշիէ-Լակրաւի դէմ, անոր հետ ճերմակ քարերով արձանագրեց հաւասարութիւն մը՝ 46-րդ շարժումին։ Արոնեան այժմ 2,5 կետով կը գրաւէ 7-րդ դիրքը։ Ուեսլի Սօ, Ալեքսանտր Կրիսչուք եւ Շահիրաբ Մամետտարով, որոնք ունին 3-ական կետ, կը բաժնեն առաջին դիրքը։ Մրցաշարքը,որ բաժնուած է 10

ՃԱՏՐԱԿ

ՋԵՐՄՈՒԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐԲԻՆ ՅԱՌԱՋԱՏԱՐՆ Է ՊԱՌԱՒԵԱՆ

Ջերմուկի մէջ տեղի ունեցող Ստեփան Աւագեանի յիշատակին նուիրուած ճատրակի միջազգային մրցաշարքի 5-րդ հանգրուանի հանդիպումներէն ետք յառաջատարն է Ռուսիոյ ներկայացուցիչը՝ Դաւիթ Պառաւեան, որ իր տրամադրութեան տակ ունի 3,5 կետ։ 3-ական կետ ունին Շանթ Սարգսեան, Մանուէլ Պետրոսեան եւ Տիգրան Յարութիւնեան։ Նշենք, որ մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն 10 ճատրակ խաղացողներ։



հանգրուանի, իր աւարտին կը հասնի 15 յունիսին։ Իսկ անոր մրցանակային հիմնադրամը կը կազմէ 325 հազար եւրօ։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ... Շարունակուած Ա. Էջէն



Ջին անոր նեցուկ կանգնելու առիթով։ Երթեւեկի խճողումով աղմկալի այս առօրեան նոյն թափով շարունակուեցաւ գիշերը՝ վերածնունդ բողոքի ցոյցերու երեկոյի, որուն ընթացքին լիբանանեան տարբեր շրջաններու մէջ ցուցարարները փակեցին ճամբաները՝ բողոքելով երկրին մէջ տիրող սղաճին եւ ապրուստի պայմաններուն դէմ։ Լիբանանեան սեւ շուկային մէջ մէկ ամբողիկեան տողարին սակը երէկ երեկոյեան հասաւ 14.700 լ. ոսկիի։ Երեկոյեան ժամը 6:00-էն սկսեալ փակուեցան Պէյրութի Վերտան փողոցը, Թրիփոլիի Նուր հրապարակը, Պեքայի Սաատնայէ եւ Թապալայա շըրջանները տանող ճամբաները, Ալէյ-Պեքա մայրուղին։ Տարբեր շրջաններու մէջ ցուցարարներ կոչ ուղղեցին քաղաքացիներուն ուղղուելու փողոց եւ մասնակցելու բողոքի ցոյցերուն։ Այս շարժումներէն ամենէն ակնեւել տեղի ունեցաւ Ժալ էլ Տիպի մէջ։ Այս մթնոլորտին կողքին, Ֆրանսա յայտարարեց, որ 17 յունիսին պիտի հիւրընկալէ միջազգային առցանց խորհրդաժողով մը՝ օժանդակելու համար լիբանանեան բանակին։ Նշենք, որ «Զորոնա» ժաիրի տարածումը զսպելու նպատակով դասաւորումներ որդեգրող կառավարական յանձնախումբը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ ջնջեց երեկոյեան ժամը 10:00-էն առաւօտեան ժամը 5:00 երկարող կրակմարի դրութիւնը։ Իսկ Պէյրութի բժիշկներու սենտիքան յայտարարեց, որ բժիշկները շաբաթական եռօրեայ դրութեամբ պիտի գործեն՝ երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 8:30-էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 1:30, վառելանիւթի խնայողութիւն կատարելու նպատակով։

«ՌՈՒՆԱՆ ԿԱՐՈՍ»

ՌԱՖԱՅԷԼ ՆԱՏԱԼ ԱՊԱՅՈՎԵՑ ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆԻ ԻՐ ՏՈՍՄԸ

Ս պ ա ն ա ց ի անուանի թենիսմեն Ռաֆայէլ Նատալ երէկ ա պ ա հ ո վ է ց Ֆրանսայի թենիսի միջազգային բաց մրցաշարքին՝ «Ռոլան Կարոս»-ի կրան շլէմի կիսաւարտականի իր տոմսը։ Զառոյդ աւարտականի մրցումներուն, 3-րդ դասուած Նատալ 2 ժամ եւ 46 վայրկեան տւեաժ պայքարէ մը ետք 6-3, 4-6, 6-4 եւ 6-0 արդիւնքով յաղթեց արժանիքից Տիեկօ Շվարցմանին (10-րդ)։ Նշենք, որ այս տարի մրցաշարքը տեղի կ'ունենայ 125-րդ անգամ ըլլալով։ Յորելենական այս մրցաշարքին մրցանակային հիմնադրամը կը կազմէ 34 միլիոն եւրօ։ Նատալ այս մրցաշարքի տիտղոսին տիրացած է 13 անգամ (մրցանիշ մը)։



«ԷՆ. ՊԻ. ԷՅ. »

ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿՆ ՈՒ ՄԱՐԶԻՉԸ

Տալաս Մավըրիքսին մաս կազմող Լիբլա Եոքիչ ընտրուեցաւ «ԷՆ. Պի. Էյ. »-ի պասքեթպոլի ախոյեանութեան լաւագոյն մարզիկը։ Տարեշրջանի լաւագոյն մարզիկի կոչման համար 26 տարեկան Եոքիչ գերազանցեց Սթեֆըն Զարին (Կոլտըն Սթէյթ Ուորիքըզ) եւ Ժոլէ Էմպիտը (Ֆիլատելֆիա Սիքսըզըզ)։ Նշենք, որ Եոքիչ Միացեալ Նահանգներէն դուրս ծնած 6-րդ մարզիկն է, որ կ'արժանանայ այս մրցանակին։ Իսկ 2020-2021 տարեշրջանի լաւագոյն մարզիչի տիտղոսին տիրացաւ Նիւ Եորք Լիքըզ գլխաւորող Թիւոնո։ Ան երկրորդ անգամ ըլլալով կը տիրանայ այս մրցանակին (առաջին անգամ՝ 2011-ին, երբ Շիբալօ Պուլզի մարզիչ էր)։ Նշենք, որ «ԷՆ. Պի. Էյ. »-ի փլէյ օֆֆ-ի մրցումները արդէն իսկ սկսած են, ուր պայքարը կը շարունակուի քառորդ աւարտական հանգրուանէն։

ՃԱՏՐԱԿ

ԳՐԻԳՈՐ ՄԵՒԱԿ ՄԵԻԹԱՐԵԱՆ ԱՊԱՅՈՎԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐԲԻ ԻՐ ՏՈՍՄԸ

Համամամբրիկեան ճատրակի 2021-ի գտումի մրցումներուն իր արձանագրած տպաւորիչ արդիւնքներուն շնորհիւ, պրագիլաիայ Գրիգոր Սեւակ Միսիթարեան յաջողեցաւ ապահովել ՖԻՏԷ-ի ճատրակի բաժակի մրցաշարքի աւարտական հանգրուանի մրցումներուն իր տոմսը։ 120 մասնակցողներէն միայն ութ խաղացողներն էին, որոնք ստացան այս մրցաշարքին մասնակցելու իրենց տոմսերը։ Իր կատարած վերջին երկու ճակատումներուն, Միսիթարեան յաղթեց իր ջուպացի երկու մրցակիցներուն։ Մրցաշարքը տեղի պիտի ունենայ 12 յուլիսէն 3 օգոստոսին, Սոչիի մէջ (Ռուսիա)։

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ...

Շարունակուած 2-րդ էջէն

ընթացքին ան շեշտեց, որ պատասխանատուներ լիբանանցիները վերածեցին մուրացկաններու եւ կարիքաւոր քաղաքացիներու։ Ան հաստատեց, որ մարոնի եկեղեցին կը մերժէ լուռ մնալ, այլ կոչ կ'ուղղէ բոլորին պաշտպանելու մարդկային իր տարրական իրաւունքներէն զրկուած ժողովուրդը։ ●ՆՇՇԱՆԱԿԵԱԼ վարչապետ Սաատ Հարիրիի երէկ ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Եռանկան Վրոնտեքան։ Հանդիպումը ուներ ծանօթացման արարողակարգային բնոյթ։ ●ՓՈՒՎԱՐԶԱՊԵՏԻ եւ պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար, արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարարի գործակատար Չէյնա Աքըր երէկ ընդունեց Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն, հազարապետ-գորավար Ապպաս Խալաֆիմը, որուն հետ ջընարկեց լիբանանեան իրադարձութիւններն ու երկրին ապահովական զարգացումները։ Աքըրի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Յորդանանի դեսպան Ուալիտ Հատիտը։ Ըննարկուեցան տեղական եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ երկկողմանի յարաբերութիւնները։ ●ՆԵՐՔԻՆ գործող եւ քաղաքապետութեանց հարցերու նախարարի պաշտօնակատար Սոհամետ Ֆահմի երէկ ընդունեց Երեսփոխաններ Յակոբ Թերգեանն ու Նիքոլա Սահնաուլին։ Հանդիպումին ընթացքին անհրաժեշտ նկատուեցաւ արագացնել Պէյրութի քաղաքապետարանին կողմէ վաւերացուած հատուցումներուն նաւահանգիստի պայթումէն տուած ժանդերուն յանձնումը։ Ըննարկուեցան նաեւ Պէյրութի ապահովութեան վերաբերող կարգ մը հարցեր։ ●ՆԱԿԿԻՆ վարչապետ Ֆուատ Սիւնիորա երէկ ընդունեց Լիբանանի մէջ Թուրքիոյ դեսպան Ալի Պարըշ Ուլուսոյը, որուն հետ ջնարկեց լիբանանեան իրադարձութիւնները, ինչպէս նաեւ երկկողմանի յարաբերութիւնները։ ●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ժողովրդավարական կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Թալալ Արսլան յայտնեց, որ դժուար ու տագնապալի օրերուն ընթացքին զինեալ եւ ապահովական ուժերուն միջեւ յարաբերութիւնը ամուր պահելը Լիբանանի գոյութեան հիմքն է։

ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՄԵՆԵՆՏԵՍԻ ՄՏԱԳՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ՝

ՊԼԻՆԶԸՆ. «ԱՊԱԳԱՅԻՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԸՆՆԵԼ ԱԶՐԴԵՅՃԱՆԻՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄԸ ԱՐՏՕԼՈՂ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԶԱՐԳԸ»

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթընի Պլինքըն Շերակոյտի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբին մէջ կատարած լուսններու ընթացքին, ի պատասխան յանձնախումբի ղեկավար, դեմոկրատական ծերակուտական Պապ Մենենտսի հարցումին, անդրադարձած է Միացեալ Նահանգներու կողմէ Ազրայէճանին օգնութիւն, ներառեալ զինուորական օգնութիւն տրամադրելու արգելք շրջանցելու ամիսներ առաջ տրուած որոշումին:

Շերակուտական Մենենտս Պլինքընին հարցում ուղղելով շեշտած է, որ հիասթափուած է ամերիկեան վարչակազմի՝ Ազատութեան աջակցման հռչակագիրի 907-րդ կէտը շրջանցելու որոշումէն, որով կ'արտօսուի Միացեալ Նահանգներուն կողմէ Ազրայէճանին ներառեալ զինուորական օգնութեան ցուցաբերումը, եւ ատիկա Ազրայէճանի՝ Էռնային Ղարաբաղի վրայ ամիսներ առաջ կատարած յարձակումէն ետք:

«Ամերիկեան վարչակազմի այս որոշումէն ետք Ազրայէճանը փաստացի խախտեց Յայաստանի Զանրապետութեան ներկայ տարածքային ամբողջականութիւնը, ազատ չէ արձակած պատերազմի ժամանակ գերեվարուած հայերը, ինչ որ միջազգային օրէնքի խախտում է: Երբ ամերիկեան վարչակազմը արտօսեց Ազրայէճանին օգնութեան ցուցաբերումը, մենք ատով կանաչ լոյս տուինք անոնց համար», յայտարարած է ծերակուտական Մենենտս:

Պատասխանելով Մենենտսին՝ արտաքին գործոց նախարար Պլինքըն ըսած է, որ իրենք «պիտի շարունակեն քննել այդ հարցը»:

«Ես աշխուժ աշխատանք տարած եմ այս հարցով, մասնաւորաբար՝ գերիներու վերադարձին եւ տագնապի իրական լուծման բանակցութիւններուն շուրջ: Կը կարծեմ՝ մենք ապագային այս հարցը պէտք է շարունակենք քննարկել եւ վերատեսութեան ենթարկել», ըսած է Պլինքըն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ...

Շարունակուած 2-րդ էջէն

այս բեւեռացումը, ատելութեան, ռիսի մթնոլորտը միայն ու միայն քակոյծ է:

Հ.՝ Արտայայտուեցաք տարածքային կորուստի մասին. այսօր ժողովուրդը հետաքրքրուած է գիտնալու, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ Սիւնիքի սահմաններուն վրայ, ինչո՞ւ սահմանագծում, սահմանագատում, 30 տարուան գերիշխան երկիր ենք, օրին մէկը այս հարցը օրակարգի վրայ չէ դրուած, ինչպէ՞ս կրնայ Յայաստանի մէջ գտնուող տարածքներու մասին նման խօսք ըլլալ, ի՞նչ քարտէսներու հիման վրայ կը կատարուին այս բոլորը եւ ի՞նչ նպատակ կը հետապնդեն:

Բ. Պ.՝ Ըստ Յայաստանի Զանրապետութեան Սահմանադրութեան, սահմանային կամ տարածքային որեւէ փոփոխութիւն պէտք է հանրաքուժի ենթարկուի. ինչպէս նաեւ միջպետական որեւէ լուրջ համաձայնագիր ես պէտք է ենթարկուի հանրաքուժի: Հրաժարեալ իշխանութիւնը, վարչապետը, որ ժամանակաւոր պաշտօնակատար է, իրաւունք չունի այդպիսի բանակցութիւններ վարելու, գալիք սերունդներուն հաշուոյն գիշումներ կատարելու, Հայաստանի Զանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը խնդրոյ առարկայ դարձնելու ... Սա շարունակութիւն է անցնող 3 տարուան գործունեութեան, եւ Փաշինեան կը փորձէ իշխանութեան վերջին օրերն ալ օգտագործել՝ գալիք սերունդներուն կացութիւնները պարտադրելու եւ հիմնականին մէջ Արցախի հարցը ամբողջութեամբ անջատելու Հայաստանի օրակարգէն: Ասիկա լրիւ անընդունելի է:

Սահմանագատման հարց կրնայ գոյութիւն ունենալ, կրնայ բանակցութիւններու արդիւնք ըլլալ, սակայն այսօր, այս պայմաններուն տակ կարելի չէ խօսիլ տարածքներ յանձնելու մասին, մասնաւոր երբ Հայաստան տիրութիւն չ'ըներ իր սահմաններուն, եւ չէ յստակացած Արցախի հարցի լուծման ընթացքը: Անընդունելի ու աններելի են իշխանութեան կարգ մը ներկայացուցիչներուն արտայայտութիւնները, թէ «բանակի պարտականութիւնը այդ ամայի տարածքները պաշտպանելն է» կամ «ամբողջ տարին սարերը ծինով ծածկուած են, մեր բանակը հոն ի՞նչ գործ ունի»: Իրաքանջիւր պետական պաշտօնեայ եւ ի մասնաւորի երկրի թիւ մէկ պատասխանատուն պարտաւոր են հաւատարիմ մնալ իրենց երդմանակալութեան խոստումին՝ պահպանելու Հայաստանի Զանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը եւ պաշտպանելու սահմանադրութիւնը:

(Շար. 1)

ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՎ, ՈՐ ՄԻԱՅԵԱԼ ՆԱԶԱՆԳՆԵՐ ԱԶՐԴԵՅՃԱՆԸ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԸ ՆԿԱՏԵՆ

«ՄԻԱՅԵԱԼ ՆԱԶԱՆԳՆԵՐ ԵՐԿՈՒ ԿՈՐՄԵՐՈՒՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵՆ՝ ԿԱՐԵԼԻ ԵՐԱԾԻՆ ԶԱՓ ՇՈՒՏ ՍԿՍԵԼՈՒ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԱԶԿԻ ՄԻՆԱԲԻ ԽՄԲԱԿԻ ԶՈՎԱՆԻՆ ՏԱԿ»

Կ'ԸՍԵ ՌԻԶԸՐ

Ազրայէճանի նախագահ Իլիամ Ալիեւի հետ Զանդիպուրի ընթացքին բանակցութիւններ վարուած են այն նիւթերուն շուրջ, զորս Միացեալ Նահանգները առաջնահերթ կը նկատեն: Այդ նիւթերն են ուժանիւթային եւ տընտեսական կապերը, մարդու իրաւունքները եւ հիմնարար ազատութիւնները, ինչպէս նաեւ շրջանային անվտանգութիւնը:

Ազրայէճանական «Միւլվալ» կայքը կը հաղորդէ, որ այս մասին Պաքուի մէջ մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Եւրոպայի եւ Եւրասիոյ գործերով օգնականի պաշտօնակատար Ֆիլիպ Ռիքըր:

Ան նաեւ նշած է, որ Միացեալ Նահանգներ Ազրայէճանը ռազմավարական գործընկեր կը նկատեն:

Ան այս առնչութեամբ մասնաւորաբար յիշեցուցած է Անդրատրիաթիք կազմի խորովակաշարի շինարարութեան աւարտին մասին, որով ապահովուած է Ազրայէճանէն Եւրոպա կազմի մատակարարումը:

Այնուհետեւ անդրադարձ կատարուած է դարաբաղեան հիմնախնդիրին: Միացեալ Նահանգներ երկու կողմերուն ալ կը ուղղած են կարելի եղածին չափ շուտ սկսելու առարկայական բանակցութիւններ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի հովանիին տակ՝ տագնապին երկարաժամկէտ լուծման համար:

Ռիքըր նաեւ նշած է, որ ԵԱՀԿ-ը այն կազմակերպութիւնն է, որ պատրաստ է օգնելու՝ լուծելու ո՛չ միայն բուն տագնապը, այլ նաեւ ատոր հետեւանքները, ներառեալ մարդասիրական խընդիրները:



«Երկիր» կը հաղորդէ, որ Ռիքըր յայտնած է Ուաշինկթընի մտահոգութիւնը Հայաստանի հետ Ազրայէճանի սահմանին վրայ լարուածութեան աճին նկատմամբ: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի օգնականը Ազրայէճանի եւ Հայաստանի կառավարութիւններուն կը ուղղած է՝ սահմանագատում կատարելու խորհրդային շրջանին երկու հանրապետութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող սահմաններով:

Ամերիկացի դիւանագետին համաձայն, Միացեալ Նահանգներ պատրաստ են այս ուղղութեամբ թեքելիք աջակցութիւն ցուցաբերելու:

Ֆիլիպ Ռիքըր անգամ մը ես արտայայտած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթընի Պլինքընի եւ նախագահ Ծօ Պայտընի դիրքորոշումը, որ Միացեալ Նահանգները Ռուսիոյ եւ Ֆրանսայի հետ պատրաստ են մասնակցելու Հայաստանի եւ Ազրայէճանի միջեւ տագնապի լուծման որոնումին:

ՔՈՉԱՐԵԱՆ. «ԺՈՂՈՎՈՒՐԴԸ...»

Շարունակուած Ա. էջէն

որպէսզի վերարտադրուին եւ նոր տարածքներ յանձնեն:

20 յունիսը Հայաստանը ազատագրելու օր է՝ արձանագրեց իշխան Սադաթեյեան:



Իսկ ՀՀԴ Բիւրոյի նախագահ, «Հայաստան» դաշինքի անդամ Արմեն Ռուստամեան Երեւանի Նոր Նորք վարչական շրջանի ընտրողներուն հետ հանդիպումին ըսաւ, որ «Հայաստան» դաշինքը մէկ կարելու արտաքինութեամբ այս ընտրութիւններուն իր յայտը ներկայացուցած է: «Մենք եկած ենք մեր ժողովուրդին բերելու յաղթանակ, մեր ժողովուրդին մէջքը ուղղելու», հաստատեց Ռուստամեան:

Ան նշեց, որ ինչքան ալ դժուար ըլլայ վիճակը, իրենք վստահ են, որ ժողովուրդը, միակամ ըլլալու պարագային, որեւէ դժուարութիւն կրնայ յաղթահարել, եւ անպայման պիտի ունենան այդ յաղթանակի բերկրանքը:

Կ'ՈՒԶՈՒԻ

Հ ա ս տ ա տ ու թ իւ ն ի մ կ ար ի ի ղ ու ն ի վ ար պ ե տ կ ա ղ ա պ ր ա գ օր ծ ն եր ու (թրթրոճի):

Դիմել՝ հեռ. 03-244967:



ՍԱՐԿԱԽԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Նախագահութեամբ՝ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Կիրակի, 13 յունիս 2021-ին, Անթիլիասի մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, Ս. եւ անմահ պատաարագի ընթացքին, պիտի կատարուի սարկաւազական ձեռնադրութիւն:

Զեռնադրիչ՝ **ԳԵՐԸ. Տ. ՇԱԶԱՆ ԱՐԸ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**

Ս. պատարագ՝ առաւօտեան ժամը 9:30-ին Զեռնադրութիւն՝ առաւօտեան ժամը 10:00-ին Զարոգ՝ առաւօտեան ժամը 11:00-ին

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցելու տոյն հոգեպարար արարողութեան եւ աղօթակից դառնալու մեր դարեկանքի ընծայելներուն, որպէսզի իրենց աստուածաճոհ առաքելութեան մէջ հաստատ մնան եւ ամուր քայլերով ընթանան «դէպի աղբիւր Լոյսին»:

ՏԵՍՉՈՒԹԻՆ ԴՊԵՇԱՆՈՒՏ

«ՀԱՅ-ԱԶՐԴԵՅՃԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԿՐԱՅ ՍՐՄԱՆ ՌԻՍԵՐ ՏԱԿԱԽԻՆ ԿԸ ՄՆԱՆ»

Կ'ԸՍԵ ՀԱՊԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՏՈՐԱՐԸ

ՀԱՊԿ-ի հաւաքական անվտանգութեան կովկասեան շրջանին մէջ, դարաբաղեան տագնապի գօտիին մէջ զինուորական գործողութիւններու աւարտէն վեց ամիսներ ետք, Ռուսիոյ եւ Ազրայէճանի նախագահներուն եւ Հայաստանի վարչապետին կողմէ եռակողմ յայտարարութեան որդեգրման շնորհիւ կացութեան կարգաւորման հոլովոյթին մէջ արձանագրուած են դրական տեղաշարժեր: ՀԱՊԿ-ի կայքը կը հաղորդէ, որ այս մասին ՀԱՊԿ-ի առցանց համախմբումի ժամանակ յայտարարած է կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Սթանիսլաւ Չաս:



«Ռուսական խաղաղապահ զօրախումբի տեղակայումը, միջազգային բանակցողներու ջանքերը Էռնային Ղարաբաղի համապարփակ տագնապի լուծման վերսկսելու համար հիմք կը ստեղծեն երկարաժամկէտ խաղաղութեան հաստատման համար: Կացութիւնը աստիճանաբար կը կայունանայ: Կարելորդ այն է, որ այլեւս չեն կրակեր:

«Մենք ուշադրութեամբ կը հետեւինք հայ-ազրայէճանական սահմանին վրայ կացութեան զարգացման, յատկապէս Հայաստանի Սիւնիքի մարզի սահմանամերձ շրջաններուն մէջ: Մենք կ'ողջունենք կողմերու՝ պետական սահմանի ճշդման հարցերը խաղաղ ճամբով լուծելու մտադրութիւնը: Մենք այնտեղ կը տեսնենք երկարաժամկէտ խաղաղութիւն հաստատելու հեռանկար:

«Միւնստիլ ատեն, այնտեղ կացութեան սրման ռիսքերը տակաւին կը մնան», ըսած է ՀԱՊԿ-ի ընդհանուր քարտուղարը:

ՌՈՒՄԻԱՆ ԵՒ ԹՈՒՐԵԻԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԾ ԵՆ ԱՐՑԱԽԻ ՄԷՃ ՄԻԱՅԵԱԼ ԿԵԴՐՈՒՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ



Ռուսիան եւ Թուրքիան բարձր գնահատած են Արցախի մէջ զինադադարի դրութեան վերահսկող միացեալ կեդրոնի գործունեութիւնը: «ՌԻԱ Նովոսթի» կը հաղորդէ, որ այս մասին յայտնած են Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութենէն՝ միջնախարարական խորհրդակցութիւններու արդիւնքներէն ետք:

Երեքշաբթի օր Մոսկուայի մէջ տեղի ունեցած են ռուս-թրքական միջնախարարական խորհրդակցութիւններ՝ Թուրքիոյ արտաքին գործոց փոխնախարար Սետաթ Եօնալիի հետ: Ռուսական կողմէն խորհրդակցութիւններու մասնակցած են Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկէյ Կերշինին, Ալեքսանտր Կորուշո եւ Անտոնէ Ռուստեմը:

«Անդրկովկասի, Ուքրանիոյ եւ Կեդրոնական Ասիոյ մէջ գոյութիւն ունեցող կացութեան քննարկման ծիրին մէջ հաստատուած է այս շրջաններուն մէջ խաղաղութեան ու կայունութեան ուղղուած ջանքերու միաւորման տրամադրութիւնը: Բարձր գնահատական տրուած է Էռնային Ղարաբաղի տագնապի գօտիին մէջ զինադադարի եւ բոլոր զինուորական գործողութիւններու կանխարգիւման վերահսկման ռուս-թրքական միացեալ կեդրոնի գործունեութեան: Համաձայնութիւն ձեռք բերուած է շարունակելու աշխատանքը Անդրկովկասի մէջ տնտեսական եւ փոխադրամիջոցային կապերու ապաշըրջափակման ուղղութեամբ», նշուած է նախարարութեան կայքին վրայ իրապարակուած հաղորդագրութեան մէջ:

ՌԻՍՈՒՑԻԶՈՒ ԿԱՐԻՔ

Ազգային միացեալ վարժարանի տնօրէնութիւնը կը յայտնէ, թէ բոլոր անոնք, որոնք կը փափաքին պաշտօնավարել արժարանին մէջ, տարբեր դասանիւթեր, յատկապէս երկրորդական կարգերու Թուաքանութիւն, եւ ունին համալսարանական համապատասխան վկայական, կրնան ներկայանալ վարժարանի քարտուղարութեան ամէն օր առաւօտեան ժամը 9:00-էն 12:00 կամ ըրկել իրենց «Սի. Կի.»-ները uac@armprelacylb.org հասցեին:

Յայտնենք նաեւ, որ վարժարանը կարիքը ունի վկայեալ հիւանդապահուիլի մը:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՅԵԱԼ ԿԱՐԺԱՐԱՆԻ